Ազգ
Azg
9 ԱՊՐԻԼ 2011 ՇԱԲԱԹ 63(4682)
ISSN: 1829-1651

# Չինական ընկերությունը կմասնակցի «Հյուսիս-հարավ» ճանապարհի շինարարության մրցույթին

**Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար Մանուկ Վարդանյանը երեկ ընդունել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ճանապարհաշինարարության ոլորտում մասնագիտացված՝ «Չոնգքինգ ճանապարհի ճարտարագիտական խումբ» շինարարական կազմակերպության նախագահի գլխավորած պատվիրակությանը: Նախարարը մանրամասն ներկայացրել է «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը: Չինական ընկերության ներկայացուցիչները հայտնել են, որ մտադիր են մասնակցելու առաջիկայում «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ տրանշ-1-ի եւ տրանշ-2-ի շինարարության համար հայտարարվելիք մրցույթին:** Ա. Մ.

# «Թունիսիլ տինք»

## *Տեր-Պետրոսյանը իշխանությունների հետ երկխոսությունը դեռ սպառված չի համարում*

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ ՀԱԿ-ի հանրահավաքը մեկ-երկու նորամուծություններ գրանցեց. նախ՝ հանրահավաքը երկու մասանոց էր՝ առաջինը Մատենադարանի մոտ տեղի ունեցավ, որի ընթացքում խոսեցին բոլոր ելույթ ունեցողները, իսկ ահա երկրորդ մասը՝ Տեր-Պետրոսյանի ելույթով, արդեն Ազատության հրապարակում էր: Մյուս նորամուծության հեղինակը հենց Լեւոն Տեր-Պետրոսյանն էր. հիմա ասենք, թե դա ինչպե՞ս եղավ: Օրեր շարունակ իրենց կողմնակիցներին ապրիլի 8-ի հանրահավաքին հրավիրելով՝ ՀԱԿ-առաջնորդները խոսում էին 100 հազար, կամ անգամ 200 հազար կողմնակիցներ հավաքելու մասին, որը հավանաբար նրանց պետք է թույլ տար առավել գործնական քայլերի դիմելու: Սակայն երեկվա հանրահավաքը ստվար չէր, անգամ բավականին ցանցառ շարքերով էին մարդիկ Մատենադարանի մոտ կանգնած, եւ ոստիկանները էլ որոշել էին մարդկանց թույլ չտալ դեպի պոնչիկանոց ճանապարհը գրավել: Երեւի նախօրոք մշակված մարտավարությամբ՝ իր թիմակիցների հետ մեկտեղ ժամանելով՝ Տեր-Պետրոսյանը միանգամից դիմեց դեպի պոնչիկանոցին հարակից տարածք, նրա հետեւից էլ ժողովուրդը, իսկ ոստիկանությունը չհասցրեց փակել նրանց ճանապարհը: Ահա այդպես էլ հանրահավաքի մասնակիցները կանգնած մնացին՝ փողոցի այդ մասը ծածկելով ու տպավորություն ստեղծելով, թե հանրահավաքը ձգվում է մինչեւ կինո «Նաիրիի» կողմերը, սակայն իրականում մինչեւ Մատենադարանի հարթակ լավ նոր խմբերով էին մարդիկ կանգնած: Այնպես որ նախորդ հանրահավաքն ավելի մարդաշատ էր: Մատենադարանի մոտ խոսեցին ամեն ինչից մի քիչ՝ Արամ Սարգսյանն ու Լեւոն Զուրաբյանը մեկ մեղմանում, մեկ կոշտանում էին. առաջինը նկատեց, թե դեռ գործնական քայլերի դիմելու են, բայց հիմա դեռ՝ համբերություն, երկրորդն իր հանգիստ շեշտադրումները մեկ էլ ազդու էր դարձնում, թե՝ դիմենք քաղաքացիական անհնազանդության: Գագիկ Ջհանգիրյանն այնպես էր բղավում, որ մարդու ականջները դժժում էին:




*Տես էջ 2*

# Երրորդ հանրապետության երրորդ նախագահի երրորդ տարին

ՀԱՆԳՐՎԱՆ

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**«...Ես մանկուց երազում էի պատմաբան դառնալ: Այդ ցանկությունն ինձ ուղեկցում էր մինչեւ 8-9-րդ դասարանները...», նախագահի պաշտոնում ընտրվելուց հետո, մեկ տարի անց՝ 2009-ի ապրիլի 7-ին, այսպես պատասխանեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը գերմանական Մայնի Ֆրանկֆուրտի Գյոթեի անվան համալսարանի պրոֆեսոր Թիլման Ալերթի հարցին: Շարունակելով՝ Հայաստանի նախագահը նշել էր. «...ճակատագիրս այլ կերպ դասավորվեց: Ծնվել եմ Ստեփանակերտում, որն այն ժամանակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կենտրոնն էր, ինչպես գիտեք, այն ժամանակ Լեռնային Ղարաբաղը գտնվում էր Ադրբեջանի կազմում»:**

**Նկատելի է, որ հենց ղարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծումը, որին Կոմկուսի կովկասյան բյուրոյի 1921-ի հուլիսի 5-ի միջազգային իրավունքին հակասող որոշումից հետո, մշտապես չի հաշտվել հայ ժողովուրդը, քաղաքական պայքարի մղեց մի ամբողջ սերունդ գործիչների, որոնցից մեկն այսօր Հայաստանի գործող նախագահն է, եւ որոնցից շատերն ամենեւին էլ չեն ցանկացել զբաղվել հենց քաղաքականությամբ:**

**Այսօր ապրիլի 9, լրանում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի երդմնակալության 3-րդ ամյակը: Նախագահի եռամյա գործունեությանն անդրադառնալը մեկ համարում անհնար կլիներ, հետեւաբար մենք կփորձենք ներկայացնել հետեւյալ հարցերի պատասխանները՝ արտաքին հարաբերություններում ի՞նչ ունենք այսօր, ինչի՞ ենք հասել, ո՞ւր ենք ձգտում աշխարհի հետ մեր հարաբերություններում:**

Հայաստանի նախագահը պաշտոնավարման երեք տարիների ընթացքում տարբեր մակարդակի այցերով եղել է Ռուսաստանում, ԱՄՆ-ում, ԵՄ տարբեր երկրներում, արաբական աշխարհի մի շարք պետություններում, Չինաստանում: Անշուշտ՝ հայ-ռուսական հարաբերություններին, փոխադարձ բարձրաստիճան այցելություններին ամբողջովին անդրադառնալու համար մի քանի տասնյակ հատորներ են անհրաժեշտ: Կարեւորագույն իրադարձությունները անցնող երեք տարիների ընթացքում թերեւս Սերժ Սարգսյանի՝ որպես նախագահի, առաջին պաշտոնական այցն էր Ռուսաստան 2008-ի հունիսի 23-25-ը, եւ, իհարկե, ՌԴ նախագահի անցյալ տարվա օգոստոսին Երեւան կատարած պետական այցը: Նախ՝ երեք տարի առաջ հունիսին երկու երկրների նախագահները Կրեմլում, անդրադառնալով հայ-ռուսական գործակցության բոլոր ոլորտներին ու հնարավորություններին՝ ընդ որում ոչ միայն երկկողմ, այլեւ՝ ԱՊՀ եւ ՀԱՊԿ շրջանակներում, հանդես եկան համատեղ հայտարարությամբ:



*Տես էջ 4*

# Ոչ թե «դե ֆակտո իշխանությունների, այլ միայն հասարակությունների հետ»

«**Ազգը**» նախորդ համարում տեղեկացրեց, որ Եվրոմիությունը, ընդգծելով Արեւելյան հարեւանության կտրվածքով անվտանգության հարցերում իր ակտիվ ներգրավվածությունը, ի դեմս Եվրոպական խորհրդարանի ԵՄ-ի բարձրաստիճան պաշտոնյաներին կոչ է արել ակտիվացնել իրենց գործունեությունը մերձդնեստրյան եւ հարավկովկասյան ձգձգված հակամարտությունների կարգավորմանը հասնելու ուղղությամբ: Այս կապակցությամբ ընդունվել է՝ «Եվրոպական հարեւանության քաղաքականության ամփոփում» վերնագրով բանաձեւը, որի 48-րդ կետին «Ազգը» առանձնահատուկ ուշադրություն էր հրավիրել: Այս կետով, հիշեցնենք, Եվրոխորհրդարանը կոչ է արել հաշվի առնել պրագմատիկ նախաձեռնությունները եւ նորարարական մոտեցումները եւ շփումներ հաստատել չճանաչված պետությունների փաստացի իշխանությունների (de facto authorities) եւ հասարակությունների հետ՝ քաղաքացիական մշակույթին եւ տեղական համայնքի հետ երկխոսությանը աջակցելու նպատակով: Սակայն երեկ պարզ դարձավ, որ բանաձեւի 48-րդ կետում «դե ֆակտո իշխանություններ» ձեւակերպումը տեղ չի գտել: Բանն այն է, որ վերոհիշյալ ձեւակերպումը եղել է բանաձեւի նախնական տարբերակում, սակայն Եվրոպական խորհրդարանի անդամները դեմ են եղել: Այժմ վերջնականապես ընդունված բանաձեւի 48-րդ կետը նույնն է, բացառությամբ, փաստորեն, «դե ֆակտո իշխանությունների...» ձեւակերպման:

Հ. Ա.

# Զատիկը նշվելու է ապրիլի 24-ին

**Այս տարի Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը նշվելու է ապրիլի 24-ին: Թերեւս պատահականություն չէ, որ Զատկի օրն ու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օրն այս տարի համընկել են: Զատիկը եկեղեցական շարժական տոներից է, որի հաշվարկը կապված է գարնանային գիշերահավասարի օրվան. ամեն տարի Սուրբ Հարության տոնը նշվում է գարնանային գիշերահավասարից հետո առաջին լիալուսնին հաջորդող կիրակի օրը, որն այս անգամ համընկել է ապրիլի 24-ին:**

**Մայր աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քահանա Մելիքյանը «Ազգի» հետ զրույցի ժամանակ տեղեկացրեց, որ ուղղափառ ու կաթոլիկ եկեղեցիները եւս Զատիկը նշելու են ապրիլի 24-ին: Տեր Վահրամը ասում է, որ եկեղեցին Զատկի օրը փոխել չէր կարող, քանի որ դա որոշվում է վերոնշյալ հաշվարկով, ու համապատասխանաբար որոշվում է նաեւ եկեղեցական ողջ տոնացույցը. «Մեզ համար իր խորհրդով նվիրական է ինչպես անմեղ զոհերի հիշատակը հարգելն, այնպես էլ Սուրբ Զատկի տոնը»: Տեր Վահրամի խոսքով՝ զոհերի հիշատակման օրն ու Հարության տոնն ամենեւին էլ չեն խանգարում միմյանց. «Հակառակը՝ Հարության խորհուրդը արտահայտում է մեր ժողովրդի լավատեսությունը, որով նա կարողացել է հաղթահարել Ցեղասպանության ողբերգությունն ու վերակերտել իր ազգային, հոգեւոր կյանքը»:**

**Տեր Վահրամը տեղեկացրեց, որ ամսի 24-ի առավոտյան Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը լինելու է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, որտեղ կատարելու է հոգեհանգստի արարողություն: Այնուհետեւ Վեհափառ հայրապետը վերադառնալու է Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ հայրապետական պատարագը կմատուցվի 11.30-ին:**

**Թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններում Զատիկը համարվում է 5 տաղավար տոներից մեկը: Այդ օրը հավատացյալները ձու են ներկում: Ձուն համարվում է հարության ու նոր կյանքի խորհրդանիշը: Տոնի նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի պատարագ, որով էլ սկսվում են զատկական տոնակատարությունները:** Ի. Պ.

# Սեփականության վկայականներ՝ ինքնակամ գույքի առկայությամբ

## *Կտրամադրվեն նաեւ Հայաստանի քաղաքային բնակավայրերում*

Քաղաքային բնակավայրերում քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց պատկանող հողամասերին կից ինքնակամ կառույցների զբաղեցրած հողամասի եւ նրա վրա գտնվող ինքնակամ շինության առկայության դեպքում կիրականացվի իրավունքների պետական գրանցում: Այս մասին նախօրեին կառավարության ընդունած որոշման մասին երեկ մանրամասներ ներկայացրեց անշարժ գույքի կադաստրի կոմիտեի փոխնախագահ **Աշոտ Մուսայանը**: Նա նշեց, որ նախկինում սահմանափակում կար այս հարցում, եւ նշված ինքնակամների առկայությունը հնարավորություն չէր տալիս օրինական գույքի նկատմամբ գրանցել սեփականության իրավունքը: Այլ խոսքերով ասած, այդ դեպքում սեփականության վկայական չէր տրվում: Ըստ Աշոտ Մուսայանի, 2009-ին նման վիճակում գտնվող 9 հազար գույք է արձանագրվել, իսկ 2010-ին՝ 12 հազար: Դրանց մասին հայտնի են դարձել, երբ քաղաքացիները դիմել են պետական ատյաններ: Իսկ նման խնդիրներ ունեցողների թիվն ավելի շատ է:

Համաձայն նոր որոշման, օրինական հողամասին կից ինքնակամ հողամաս կամ շինություն ունեցողների գույքը կգրանցվի, դրա դիմաց գույքահարկ նույնպես կգանձվի, իսկ վկայականում կնշվի ինքնակամ գույքի առկայության մասին: Պատասխանելով «**Ազգի**» հարցին, անշարժ գույքի կադաստրի կոմիտեի փոխնախագահն ասաց, որ ինքնակամ հողամասերը վկայականում շտրիխավորված կնշվեն եւ դրանց առկայությունը չի խանգարի քաղաքացիներին գործարքներ իրականացնել: Ըստ Աշոտ Մուսայանի, այս որոշումը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը կադաստրի համակարգում եւ հնարավորություն կստեղծի բազմաթիվ գույքային միավորների շրջանառվել անշարժ գույքի շուկայում:

Մեր մյուս հարցին, թե վերոնշյալ ինքնակամ գույքի նկատմամբ դրա սեփականատերը կարո՞ղ է փոխհատուցում ակնկալել իրացման գոտիներ համարվող տարածքներում, Աշոտ Մուսայանը դրական պատասխանեց, ասելով, որ եթե այն մինչեւ տվյալ տարածքի իրացման գոտի ճանաչվելն է օգտագործվել տվյալ տիրապետողի կողմից:

Ի դեպ, այս որոշման ընդունման առաջարկը դեռեւս 6 տարի առաջ արվել էր կադաստրի կոմիտեի նախկին նախագահի կողմից: Մի՞թե այդքան երկար ժամանակ էր պետք դա ընկալելու եւ կյանքի կոչելու համար:

Ա. Մ.

# Թերթելով «Շպար» սուպերմարկետի գովազդաթերթը

**Ավստրիա, Գրաց**

Տասներորդ օրն է, ինչ հյուրընկալ այս երկրի 2-րդ, մոտ 300 հզ. բնակիչ ունեցող Գրաց քաղաքում եմ: Դիմավորման ոգեւորության ու առաջին շփումներից հետո առօրյան մտնում է իր սովորական ընթացքի մեջ:

Ինքնաբերաբար սկսում ես մտորել հայաստանյան եւ այստեղի գործընթացների մասին, որոնցից թերեւս կարեւորագույններից է կյանքը Ավստրիայում եւ Հայաստանում: Հիմնական գնահատականը պաշտոնյաներին ու մասնագետներին թողնելով՝ փորձենք ներկայացնել հայրենի ընթերցողին առավել մտահոգող առեւտրային ու գնային ոլորտի որոշ մանրամասներ:

Մարտի 31-ին ստացված փոստային առաքումների մեջ կար եվրոպական մի քանի երկրներում գործող «Շպար» սուպերմարկետների ցանցի մինչեւ ապրիլի 13-ը առաջարկվող մոտ 100 ապրանքատեսակների 16 էջերից բաղկացած գովազդաթերթը: Հենց առաջին էջի նկարն ու գինը հիշեցրին մոտ 20 օր առաջ Երեւանում ունեցածս մի հանդիպման մանրամասները: Այցելությունս ծանոթ մեկին, որ զուգարանի թղթի արտադրությունում է աշխատում, անսպասելի ընթացք ունեցավ. պարզվեց՝ մոտ 1 տարի չեն աշխատում: Պատճառը հասկանալի ներկայացվեց. էլեկտրաէներգիայի գնի պատճառով: Եթե անգամ այլ պատճառ կար, որը ծանոթս գուցե հարկ չհամարեց առաջին պատահած պարագայում նշել, արտադրության շուրջ 1 տարի ձգվող պարապուրդը առավել քան տարօրինակ է, տխուր իրողություն: Եվ սա այն դեպքում, երբ գիտենք, որ մերոնց այս արտադրանքը որակի առումով զգալիորեն զիջում է, ասենք, ցուցադրվածին, որը եռաշերտ լինելով հանդերձ՝ առաջարկվում է ՀՀ 125 դրամին համարժեք 25 եվրոցենտով: Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական տարածքի սուպերմարկետներից մեկում, որը մշտապես հիշեցնում է իր ցածր գները, տողերիս հեղինակն այս կարգի թուղթը գնում է նվազագույնը 210 դրամով: Չեմ վիճարկում ներմուծման պարագայում 125-210 դրամ գնագոյացումը, թեեւ ապրանքի մեծաքանակ ձեռքբերումը այլ գին է հուշում. փոխարենը ցանկանում եմ հարց ուղղել ՀՀ տնտեսական ոլորտի պատասխանատուներին, թե ինչու է մեր տեղական հղկաթուղթ որակվող այս արտադրանքը գրեթե նույն գնով վաճառվում, ինչ «Շպար»-ում առաջարկվող գերազանց որակի եռաշերտը. պատասխանե՛ք, պարոնայք պաշտոնյաներ ու մասնագետներ, հանգստացրեք հասարակական կարծիքն ու տրամադրությունները:




Գովազդաթերթի 3-րդ էջում «Տունեց» ձկնատեսակի բուսական յուղի մեջ պատրաստված պահածոյի նկարն է: Այն սլովենական արտադրանք է, պահպանման ժամկետը՝ մինչեւ 2015 թվականը: Թվում է՝ ներմուծողները անհանգստանալու առիթ չունեն, առջեւում ամբողջ 5 տարի կա, ապրանքը կարելի է առաջարկված 1,19 եվրոյով դեռ երկար պահել ցուցափեղկերում: Իհարկե կարելի է... բայց զուգահեռաբար առաջարկելով 3 տուփ վերցնելու պարագայում վճարել 2-ի արժեքը, 1 տուփի գինը ստացվում է 79 ցենտ, ՀՀ արժույթով՝ մոտ 400 դրամ: Տողերիս հեղինակը, որ Երեւանի սուպերմարկետներում համանման ձկան պահածոն ձեռք է բերում 500 դրամին մոտ գնով, այստեղ հաճույքով օգտվեց առաջարկվող տարբերակից: Անգամ 10 օրը 1 տուփ սպառելով, խնայողությունը կազմում է 1,2 եվրո: Ավստրիացիները սիրահոժար են օգտվում նման առաջարկներից, իսկ թե որտեղ կարելի է ծախսել չնչին համարվող խնայողությունը՝ ստորեւ:

Գարնանային շոգը երեւանցիների մեջ մասամբ զովացուցիչների օգնությամբ մեղմելու պահանջ է առաջացնում, որպեսզի ցանկությունը միշտ չէ, որ մեզանում հնարավոր է իրականացնել: Պատճառներից թերեւս հիմնականը մեր ազգային հարստություններից մեկը հռչակվող հանքային ջրի գինն է: Երբ Հայաստանում ես, այս ապրանքատեսակի վաճառվող գինը այնպիսի վրդովմունք չի առաջացնում, ինչպիսին արձանագրվում է ավստրիական հանքային ջրերի գներին ծանոթանալուց հետո: Երեւանի առեւտրային ցանցում հանքային ջրի 1-լիտրանոց շշի նվազագույն գինը 180 դրամ է, Գրացի սուպերմարկետներում 1,5 լիտրը առաջարկվում է 150 դրամին համարժեք 29 ցենտով: Խնդրեմ, ծախսեք ձեր 1,2 եվրո խնայողությունը, ստացվում է, որ 1,5-լիտրանոց 6 շիշ հանքային ջրի դիմաց վճարեցիք պահանջվող 1,8 եվրոյի ընդամենը 60 ցենտը, մոտ 300 դրամ: Երեւանյան սուպերմարկետներում այսօրինակ առեւտուրը կկազմի 1300 դրամ: Միամտություն է կարծել, թե ավստրիացի առեւտրականները մոռանում են իրենց շահույթի մասին, որը հաշվելը խնդիր չենք համարում: Փոխարենը խթանելով ապրանքաշրջանառությունը, նրանք իրենց հիմնական նպատակից զատ արժանանում են գնորդի բարյացակամությանը, որի ականատեսն ես դառնում սուպերմարկետներ յուրաքանչյուր այցելության ընթացքում: Ի լրումն ասվածի հաստատեմ, որ ինչպես ալպյան մարգագետիններում պահվող անասունների կաթից պատրաստվող կաթնամթերքն է գերազանց որակի, այնպես էլ այդ լեռներից բխող հանքային ջրերն են գրավիչ ու հաճելի: Դրանք բացելու պահին հայկականներին շատ հատուկ յուրօրինակ ագրեսիվություն չեն ցուցաբերում, որը հայ սպառողները որակում են ինչ-ինչ միջոցների օգնությամբ ստացվող արդյունք:

Ահա այսպիսի բաներ հայերիս բարեկամ Ավստրիայից, լեռնային ու հարթավայրային մի երկիր, ուր 1 բնակչի հաշվով նույնքան՝ 1 հա տարածք կամ 1700 քմ վարելահող կա, ինչ Հայաստանում է: Բայց այստեղ արտադրության ու վաճառքի այլ ավանդույթներ կան. ասենք՝ խնձոր աճեցնողները մեղմ ժպիտով նկատում են, որ իրենք իրենց վիրավորված կզգան, եթե երկիր այլ պետություններից այս տեղի նկատելի չափի ներկրումներ կատարվեն: Բայց այս մասին մի քանի օրից, որոշ այցելություններից ու հանդիպումներից հետո:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

## Մահացել է հայ ժողովրդի սիրելի բարեկամը

**Մարտի 17-ին Թուրքիայում իր մահկանացուն է կնքել հայ ժողովրդի բարեկամ Վոլֆ Ռայֆնրադը: Ազգությամբ գերմանացի Վոլֆ Ռայֆնրադը եղել է գերմանական Կարմիր խաչ կազմակերպության նախկին խմբավարը: Նա ծնվել է 1932 թվականին Արեւելյան Գերմանիայում: 1994 թվականից Վոլֆ Ռայֆնրադը, որպես գերմանական Կարմիր խաչի կազմակերպության վարիչ, մարդասիրական ու բժշկական օժանդակություն է ցուցաբերել հայությանը: Իր ծավալած բարեսիրական աշխատանքների համար Վոլֆ Ռայֆնրադն արժանացել է Գերմանիայի Պատվո բարձր շքանշանին, ուրիշ երկրների կողմից եւս արժանացել է տարբեր պատվոգրերի:**

Ի. Պ.

## Գրեթե ամեն ամիս բուժսպասարկման ոլորտում արձանագրվում է 5-6 տոկոս գնաճ

**2011 թվականին Հայաստանում գնաճին ամենաշատը նպաստել է բուժսպասարկման թանկացումը: Հայաստանի կենտրոնական բանկը հրապարակել է գնաճին նպաստող ապրանքախմբերի վերաբերյալ տվյալները, որոնց համաձայն՝ փետրվարին հունվարի նկատմամբ գրանցվել է 1,9 տոկոս գնաճ, որի 0,75 կետը բաժին է ընկնում հենց բուժսպասարկմանը: News.am-ը համեմատության համար նշում է, որ այդ նույն ժամանակահատվածում հացամթերքը գնաճին նպաստել է ընդամենը 0,45 տոկոսային կետով, բենզինը՝ 0,1, իսկ բանջարեղենն ու կարտոֆիլը՝ 0,32 տոկոսային կետով: Գրեթե ամեն ամիս բուժսպասարկման ոլորտում արձանագրվում է 5-6 տոկոս գնաճ:**

**Գնաճը մեծ է հատկապես վիրաբուժական ծառայությունների մասով, որտեղ վերջին մեկ տարում արձանագրվել է 29,9 տոկոս գնաճ, իսկ վիրաբույժների խորհրդատվական ծառայությունը թանկացել է շուրջ 10 տոկոսով:**

**Հիվանդանոցների վարչական մասից news.am-ի հարցումներին հիմնականում պատասխանել են, որ թանկացել է դեղորայքը, ինչն էլ հենց անդրադառնում է վիրահատությունների գների վրա:**

Ի. Պ.

## Եհովայի վկաները PR-ի կարի՞ք ունեն

**Սույն թվականի ապրիլի 7-ին, ժամը 10:00-ի կողմերում «Եհովայի վկաներ» կրոնական աղանդից զանգահարել են «ՓիԱր-ի զարգացման հայկական կենտրոն» եւ հետաքրքրվել PR ծառայությունների մատուցման կարգով: Սկզբում թաքցնելով ով լինելը, զանգահարողն ուղղակի նշել է, որ առայժմ ցանկանում են մամլո ասուլիս կազմակերպել Եվրոպական դատարանին ինչ-որ հայց ներկայացնելու եւ դրա արդյունքների մասին: Այնուհետեւ մեծ զգուշավորությամբ զանգահարողը ներկայացել է որպես Արթուր Իսպիրյան՝ «Հայաստանի Եհովայի վկաների քրիստոնեական կազմակերպությունից»: Նա հետաքրքրվել է, թե ինչպես կարող է հանդիպել կենտրոնի նախագահ Հայկ Կիրակոսյանի հետ՝ խնդիրն ավելի մանրամասն քննարկելու համար, առանց նախապես իմանալու, որ վերջինս ավարտել է ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետը:**

**«ՓիԱր-ի զարգացման հայկական կենտրոն»-ը կոչ է անում ԶԼՄ-ներին եւ PR ծառայություններ մատուցող ընկերություններին խուսափել նմանատիպ վտանգավոր եւ դրսից ֆինանսավորվող ուժերին որեւէ տեսակի աջակցություն ցուցաբերելուց: Իսկ զանազան կրոնական աղանդներին եւս մեկ անգամ հիշեցնում ենք, որ «ՓիԱր-ի զարգացման հայկական կենտրոն»-ը չի զբաղվում կրոնական աղանդների PR-ով:**

**P.S. Ստորեւ ներկայացված են այն հեռախոսահամարները, որոնցով զանգահարել են «Եհովայի վկաներ» կրոնական աղանդից. (010) 27-57-52, (077) 90-08-29:**

*«ՓիԱր-ի զարգացման հայկական կենտրոն» հասարակայնության հետ կապերի բաժին*

## Մինչեւ 13 տոկոս դրամային ավանդներ «Արդշինինվեստբանկում»

**Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», ապրիլի 8-ից մեկնարկում է եռամսյա ակցիա, որի ընթացքում բանկում ընդունվելու են ՀՀ դրամով ավանդներ մինչեւ 13 տոկոս տոկոսադրույքով: Անդրադառնալով այս ակցիային, «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահի պաշտոնակատար Կարապետ Գեւորգյանը նշել է, որ այն հնարավորություն կտա մեր ազգաբնակչությանը իր խնայած գումարների դիմաց ստանալ առավել բարձր եկամուտներ: Հաղորդագրության մեջ նշվում է, որ բանկն ընդունում է նաեւ ավանդներ ՌԴ ռուբլով, ԱՄՆ դոլարով եւ եվրոյով՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակներով:**

Ա. Մ.

# «Թունիսիլ տիմք»

*1-ին էջից*

Մի խոսքով, երբ եկավ Տեր-Պետրոսյանի ելույթի հերթը, հարթակից հայտարարվեց, որ ղեկավարությունն իջնում է՝ ժողովրդին առաջնորդելու Ազատության հրապարակ: Իջան-գնացին, Ազատության հրապարակի մոտ էլ Լեւոն Զուրաբյանի եւ ոստիկանության ղեկավարների բանակցությունները մի հինգ րոպե տեւեցին, այդպես էլ կազմակերպված-սիրով հանրահավաքի մասնակիցները մտան հրապարակ, բայց այստեղ արդեն ստիպված էին մի ժամից ավելի սպասել, մինչեւ տեխնիկա դրստեցին, ու Տեր-Պետրոսյանը խոսեց: Մինչեւ նրա խոսքի հիմնական շեշտադրումները փոխանցելը, ասենք, որ նա նշանակեց հաջորդ հանրահավաքի օրը՝ ապրիլի 28-ին. «Մենք ակնկալում ենք, որ մինչեւ հաջորդ հանրահավաքը, որը կկայանա ապրիլի 28-ին, հանուն երկխոսության (իշխանությունների հետ-Մ.Խ.) մեր կողմից առաջ քաշված երեք նվազագույն պահանջները, որոնք են՝ քաղբանտարկյալների ազատ արձակումը, Ազատության հրապարակում հանրահավաքներ անցկացնելու իրավունքի վերականգնումը եւ մարտի 1-ի սպանությունները բացահայտելու պաշտոնական հավաստիացումը, կատարված պետք է լինեն: Եթե դա տեղի չունենա, ապա Հայ ազգային կոնգրեսը, սպառված համարելով երկխոսության հնարավորությունը, հարկադրված է լինելու կտրուկ փոխել իր մարտավարությունն ու գործողությունների բնույթը: Մենք դեռեւս հակված չենք իշխանության հետ վերջնագրի լեզվով խոսելու, բայց ժողովրդի համբերությունն էլ չափ ու սահման ունի: Ապրիլի 28-ը պետք է դառնա կա՛մ երկխոսության սկզբնավորման, կա՛մ էլ՝ իշխանության ու հասարակության վերջնական ջրբաժանի օր», սա Տեր-Պետրոսյանի ելույթի ամփոփումն էր, երկխոսությունն էլ իշխանության հետ նա պատկերացնում է արտահերթ ընտրությունների վերաբերյալ պայմանավորվածության առումով: Մինչ այդ նա անդրադարձել էր ՀԱԿ-ին ուղղված այն մեղադրանքին, թե նա մոնոպոլիզացրել է ընդդիմադիր դաշտը, եւ երրորդ ուժի ստեղծման արծարծմանը ընդդիմադիր այլ միավորների կողմից: Նա նկատեց, որ երրորդ ուժի ստեղծման մասին խոսակցությունը հենց նշանակում է, թե որ առայժմ գոյություն ունի երկու ուժ՝ իշխանությունը եւ ՀԱԿ-ը: Հաշվելով ընտրազանգվածին՝ թե իրենցը 100 հազար է, նա նկատեց, թե Հայաստանի չափահաս բնակչության թիվը կազմում է շուրջ 1.800.000 մարդ, ինչը նշանակում է, որ երրորդ ուժի հավակնություն ունեցող առնվազն 18 կազմակերպություն կարող է համախմբել 100.000-ական մարդու. «Այսինքն՝ Հայաստանի մարդկային պոտենցիալը տվյալ պահին բավարարում է ստեղծել ոչ թե մեկ, այլ տասնութ երրորդ ուժ: Այդ դեպքում ինչո՞ւ, այսքան խոսակցություններից հետո, թեկուզ դրանցից մեկը չի ձեւավորվում», հարցրեց Տեր-Պետրոսյանը՝ եզրակացնելով, թե երրորդ ուժի դերի հավակնորդներն ուզում են իրենց նպատակին հասնել ոչ թե հասարակության հետ տարվող երկարատեւ ու համառ աշխատանքի եւ նրա վստահությունը շահելուն ուղղված հսկայական ջանքերի գործադրման գնով, այլ պարզապես կոնգրեսին վարկաբեկելու ու նրան ասպարեզից հեռացնելու հեշտ թվացող ճանապարհով:

Իսկ նոր պահանջ կամ որեւէ նոր բովանդակային նյութ Տեր-Պետրոսյանը չառաջադրեց՝ քաղբանտարկյալների ազատ արձակում, Ազատության հրապարակի վերադարձ ժողովրդին (երեւի ժողովուրդ ասելով՝ նկատի ուներ ՀԱԿ-ին), եւ մարտի 1-ի դեպքերի իրական բացահայտում: Այսինքն՝ ի՞նչ են անելու ՀԱԿ-ն ու իր համակիրները, դեռ չի երեւում: Չնայած՝ լավ էլ երեւում է, եթե նրա ելույթի ողջ տրամադրությունը փոխանցենք ( որին, ի դեպ, դեռ կանդրադառնանք). ա) միակ ընդդիմությունը ՀԱԿ-ն է, ու վերջ, բ) գործողության չդիմելու պաուզան դեռ ձգվում է՝ կամ այդպես դեռ ռեժիմի պես երկար է ձգվելու, կամ գուցե ինչ-որ նշանի սպասում են ՀԱԿ-ականները, գ) որ ՀԱԿ-ից իշխանությունները վախենալու բան չունեն, իսկ ողջ հանրահավաքային շարժընթացն ընդամենը վերստին գործոն է դարձնում Տեր-Պետրոսյանին՝ մեծ խաղերում իր բաժին խաղը թելադրելու համար: Մնացյալը՝ հետագայում:

*Հ.Գ. Նյութի վերնագիրը հանրահավաքի մասնակիցներից մեկի պաստառի վրա էր, թեեւ մյուս պաստառներն ավելի համեստ եւ հենց Տեր-Պետրոսյանի ասած պահանջներն էին պարունակում:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Հեղափոխությունները բացասական ազդեցություն են ունենում հայ համայնքի հետագա ճակատագրի վրա

Արաբական աշխարհում կատարվող իրադարձությունները չի կարելի մեկ բառով, մեկ իրադարձության ներքո ներկայացնել: Յուրաքանչյուր երկրում հեղափոխությունը տարբեր պատճառներ է կրել: Եգիպտոսում հեղափոխության հիմքը սոցիալական էր, Եմենում՝ հարավային եւ հյուսիսային հատվածների առճակատումները, Բահրեյնում՝ սուննիների ու շիաների միջեւ բախումները, իսկ Լիբիայում սկսվել է քաղաքացիական պատերազմ:

Քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանի** գնահատմամբ՝ արաբական աշխարհի վերոնշյալ երկրներում կատարվող հեղափոխությունները անհնար է մեկ խնդրի, մեկ միավորի շուրջը դիտարկել: Նրանց միավորում է միայն արաբական «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը, որը տեղեկատվություն է հաղորդում հարեւան երկրում կատարվող իրադարձությունների մասին:



ՖՈՏՈԼՈՒՐ

Հայաստանի համար արաբական աշխարհում կատարվող փոփոխությունները առանձնահատուկ նշանակություն ունեն. վերոնշյալ երկրներում գործում են հայկական համայնքներ, հետեւաբար յուրաքանչյուր բախումը, փոփոխությունը կառավարության կազմում կարող է լուրջ ազդեցություն ունենալ հայերի վրա:

«Մենք դեռ չգիտենք՝ Քադդաֆիին ինչպիսի Մադդաֆի կփոխարինի: Գործողությունները ավարտված չեն: Այս ամենից ժողովրդավարության հոտ չի գալիս, որովհետեւ մի վարչակարգը փոխարինվում է մյուսով: Մի նախագահին մյուսով փոխարինելը դեռեւս չի նշանակում դեմոկրատիայի հաստատում», նշեց Իսկանդարյանը:

Քաղաքագետը համոզված է, որ արաբական աշխարհում կատարվող իրադարձությունները բազմաթիվ փոփոխություններ կբերեն: Օրինակ, Սիրիայում ծավալվող գործողությունները եթե շարունակվեն եւ կատարվի իշխանափոխություն, ապա լուրջ ազդեցություն կունենա իրանա-սիրիական հարաբերությունների վրա, որոնք այսօր քաղաքական եւ տնտեսական ոլորտներում ամենաբարձր մակարդակի վրա են: Սիրիայում հեղափոխությունը գուցե խառնի Իրանի խաղաքարտերն ու բացասական ազդեցություն ունենա տարածաշրջանում Իրանի դերի վրա: Իսկանդարյանի գնահատմամբ, այդ ժամանակ կակտիվանա Թուրքիան:

Սփյուռքագետ **Էդուարդ Մելքոնյանի** հիշեցմամբ՝ արաբական երկրներում կան բազմաթիվ հայեր: Հատկապես մեծ համայնքներ կան Սիրիայում եւ Լիբանանում: Եգիպտոսում հայերի թիվը չի գերազանցում 8000-ը: Նրանք հիմնականում ապրում են Ալեքսանդրիայում եւ Կահիրեում: Մուբարաքի վարչակարգի դեմ կազմակերպվող առաջին ցույցերի, ընդվզումների ժամանակ հայ համայնքը որոշում կայացրեց չեզոք դիրք գրավել: «Դա հասկանալի է, քանի որ հայկական համայնքը շատ փոքր է, եւ իր դիրքորոշումն առանձնակի նշանակություն չի կարող ունենալ»:

Ի տարբերություն Եգիպտոսի՝ Սիրիայում բնակվող հայ համայնքը հավատարմություն ցուցաբերեց նախագահ Բաշար ալ Ասադին: Շուրջ 50.000-անոց հայկական համայնքի նման դիրքորոշումը, ըստ Մելքոնյանի, պատահական չէ, ոչ էլ անհասների քմահաճույք: «Հայ համայնքը Սիրիայում բացառիկ հնարավորություններ ունի: Հայերը Սիրիայի բազմաթիվ քաղաքներում ունեն եկեղեցիներ, դպրոցներ ու կազմակերպություններ: Հայերն իշխանությունից դժգոհ չեն»:

Մասնագետը փաստում է, որ եգիպտահայերը սպասումների մեջ են: Որովհետեւ դեռեւս հստակ չէ, թե ինչ կլինի հետագայում: Հայտնի չէ, թե նոր վարչախումբն ինչ դիրքորոշում կարձանագրի: Իսկ նման պարագայում առաջին տուժողը լինում է ազգային փոքրամասնություն, քանի որ շատ փխրուն օրգանիզմ է: Այս առումով Մելքոնյանը հիշեց ամերիկյան ասացվածքը «No news, good news»՝ հավելելով, որ հայ համայնքին ձեռնտու է, որ արաբական աշխարհում տիրի խաղաղություն:

Ընդհանուր առմամբ, հեղափոխությունները միշտ էլ բացասական ազդեցություն են ունենում հայ համայնքի վրա: Յուրաքանչյուր հեղափոխությունից հետո տվյալ երկրում հայ համայնքի թիվը զգալիորեն կրճատվում է: Երբ 1956-ին Եգիպտոսում տեղի ունեցավ հեղափոխություն, եւ տապալվեց Եգիպտոսի թագավոր Ֆարուքի իշխանությունը, հայերի թիվը երկրում զգալիորեն կրճատվեց: Երբ 1975-ին Լիբանանում սկսվեց քաղաքացիական պատերազմը, հայ համայնքը չեզոք դիրքորոշում ուներ, սակայն դա չխանգարեց, որ Լիբանանում հայերի թիվը կրճատվի: Նմանատիպ իրավիճակ ստեղծվեց նաեւ Իրանում: 1979թ. տեղի ունեցած հեղափոխությունը ստիպեց, որ բազմաթիվ իրանահայեր լքեն երկրի սահմանները:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Առաջիկա ընտրություններին մասնակցելու համար ԱԻՄ-ը գումար է հանգանակում

«Ազգային ինքնորոշում միավորում» կուսակցությունը երեկ հանդես եկավ հայտարարությամբ, որը վերաբերում էր 2012 թվականին կայանալիք խորհրդարանական ընտրություններին: Հայաստանի քաղաքացիներին ու աշխարհասփյուռ հայերին ԱԻՄ-ը կոչ է անում մասնակցելու կազմակերպությանը սատարելուն ուղղված հանգանակությանը, որի շնորհիվ ԱԻՄ-ը կկարողանա վերսկսել իր ակտիվ գործունեությունը: Կուսակցությունն արդեն հաշվեհամար է բացել «Արդշինինվեստ» բանկում: Այս մասին երեկ լրագրողներին ասաց ԱԻՄ առաջնորդ **Պարույր Հայրիկյանը**՝ ավելացնելով, որ քաղաքական կյանքի հերթական փուլն ընտրություններն են: «Ասպարեզ ենք իջել դրամահավաքի նախաձեռնությամբ ու մոտավորապես մարտից մինչեւ այս պահը մեր ակնկալիքից 10 անգամ պակաս գումար ենք հավաքել: Ակնկալում էինք, որ պետք է հավաքված լիներ գոնե 10 միլիոն դրամ, սակայն հավաքված է ընդամենը 1 միլիոն դրամ», նշում է կուսակցության առաջնորդը եւ հավելում, որ ԱԻՄ-ը կմասնակցի ընտրություններին, եթե զգա, որ ժողովուրդն իրապես զգում է իրենց կուսակցության կարիքը: «Իսկ եթե ընտրությանը որպես ԱԻՄ չմասնակցենք, ապա դա մեզ համար կարող է շատ ծանր լինել. այսինքն՝ իրար հետեւից 2-3 ընտրություններին չմասնակցելը կարող է նշանակել կուսակցության քաղաքական լուրջ դերակատարության էական սպառում», «Փաստարկ» ակումբում հավելեց Պարույր Հայրիկյանը: Փաստորեն, խորհրդարանական ընտրություններին ԱԻՄ-ի մասնակցությունը կախված է հանգանակված գումարի չափից ու դրամահավաքին ժողովրդի ակտիվ մասնակցությունից:

«**Ազգի**» հարցին՝ եթե չհավաքվի անհրաժեշտ քանակությամբ գումար, եւ ԱԻՄ-ն էլ չմասնակցի խորհրդարանական առաջիկա ընտրություններին, ապա կուսակցությունը ժողովրդից հավաքված գումարն ի՞նչ է անելու, Պարույր Հայրիկյանը պատասխանեց. «Մինչ ընտրություններին կապված ծախսերի առկայությունը հավաքված գումարն անձեռնմխելի է ու փակելու է միայն նախընտրական գործունեության ծախսերը: Իսկ եթե ԱԻՄ-ը չմասնակցի ընտրություններին, նվիրատուներին տեղեկացնելու ենք, որ գումարը վերադարձնելու ենք կամ էլ նվիրատուի հայեցողությամբ կարող է օգտագործվել կուսակցական գործունեության այլ ոլորտներում»:

Ի. Պ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Արմեն Դարբինյանը «Տաշիր-2011»-ի եւ ատոմակայանի մասին



ARMENPRESS

ՀՀ նախկին վարչապետ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր **Արմեն Դարբինյանը** ապրիլի 6-ին հրապարակային դասախոսության ժամանակ «Տաշիր-2011» համահայկական երաժշտական մրցանակաբաշխության առիթով ասել է, որ մենք իրավունք չունենք ժողովուրդ ներկայացնել նման գավառական, ցածրաճաշակ ֆորմատով եւ մեզ ցուցադրել հոգեւոր լուրջ ժողովրդին անվայել խղճուկ տեսքով:

Նա նշել է, որ մրցանակաբաշխությունում նույնիսկ Ռուսաստանը ներկայացնող մշակույթի վարպետները բեմի վրա իրենց լավ չէին զգում, գիտենալով, որ հայ ժողովուրդն ունի միանգամայն ուրիշ հոգեւոր բարձունքներ:

«Ունենք Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Ավետ Տերտերյանի եւ այլոց վիթխարի երաժշտական ժառանգությունը, որոնք կկազմեին ամեն մի ազգային երաժշտական պատմության պարծանք: Բայց մենք Կրեմլի դահլիճում ցուցադրում ենք միանգամայն վայրենի երգիչ-երգչուհիների եւ պարծենում ենք, իբր մենք՝ հայերս «գրավել ենք» Կրեմլը», ավելացրել է Դարբինյանը:

Ռեկտորի խոսքերով, մրցանակաբաշխությունը ինչ-որ իմաստով պատկերում է Հայաստանի ներկա վիճակը: «Եթե պետությունն ունի հստակ կողմնորոշիչներ, նա չպետք է թույլ տա նման ազգային երաժշտական մրցանակաբաշխությունների անցկացում», ասել է նա:

Դարբինյանի կարծիքով, անկախ պետականության եւ ինքնիշխանության համար Հայաստանը պետք է երախտապարտ լինի Միխայիլ Գորբաչովին, որը կործանեց խորհրդային վարչակարգը:

Ինչ վերաբերում է ճապոնական ատոմակայանի աղետին, Դարբինյանն ասել է, որ նույնիսկ տեխնոլոգիապես զարգացած Ճապոնիան չկարողացավ կանխել ահավոր աղետը: Նրա կարծիքով, անհասկանալի է, թե Մեծամորի ատոմակայանի առնչությամբ մենք ինչպես ենք աշխարհին տալու անվտանգության երաշխիքներ, եթե «տեխնոլոգիաների եւ ագրեգատների սեփականատերը չենք»: Դարբինյանը առավել նպատակահարմար է համարում հողմաէլեկտրակայանները, Արեգակի էներգիայով, կենսավառելիքով գործող էլեկտրակայանները:

# Արմեն Ջիգարխանյանի հարցազրույցը ադրբեջանական կայքում

Ադրբեջանական Vesti.az կայքէջում ՀՀ վաստակավոր արտիստ **Արմեն Ջիգարխանյանի** հարցազրույցը մտահոգության ու հիասթափության լուրջ տեղիք է տվել: Երեկ հարցազրույցը սոցիալական ցանցերի, արվեստագետների ուշադրության կենտրոնում էր: Ջիգարխանյանին ներկայացնելով որպես հայտնի դերասանի, ԽՍՀՄ վաստակավոր արտիստի, թատրոնի ղեկավարի, մարդու, ում շատ են հարգում Ադրբեջանում, չի նշվում, որ նա հայ է, ՀՀ վաստակավոր արտիստ: Սակայն առավել զարհուրելի են Ջիգարխանյանի մեկնաբանությունները ղարաբաղյան հակամարտության մասին: «Այն հենց սկզբից կրոնական հողի վրա էր հիմնված: Մեկը մի ձեւ է աղոթում, մյուսները՝ մեկ այլ»:

Ցավոք, հայտնի դերասանը մոռացել է, որ ատելության հիմքը դրել են ադրբեջանցիները 1988-ին, երբ Սումգայիթ քաղաքում հարյուրավոր հայերի ադրբեջանցիները սպանեցին ու վառեցին, այնուհետեւ այդ ատելությունը շարունակվեց 1990-ի հունվարին, երբ շուրջ մեկ շաբաթ Բաքվում հայերին վառում էին, բռնաբարում, խոշտանգումների ենթարկում: Այդ ժամանակ պատերազմը դեռ չէր սկսվել: Կրոնական ոչ մի խնդիր երկու երկրների միջեւ երբեք չի եղել:

Միակ խնդիրն այն էր, որ Ղարաբաղը ԽՍՀՄ փլուզումից հետո մնացած այլ պետությունների օրինակով ցանկանում էր ինքնորոշում, ինչին Ադրբեջանը պատասխանում էր անմեղ քաղաքացիներին սպանելով:

Դեռ պատերազմը չէր ավարտվել, երբ 1992-ի ապրիլի 10-ին տեղի ունեցավ Մարաղայի ողբերգությունը: Ադրբեջանցիները հարձակվեցին Մարաղա գյուղի վրա, սպանեցին մի քանի հարյուր հայերի: Ցավալի է, որ Ջիգարխանյանն այս ամենը մոռացել է, սակայն հիշել է, որ Մոսկվայում «Թեհրան-43» ֆիլմի նկարահանման ժամանակ հանդիպել է Հեյդար Ալիեւին:

«Ինձ շատ ջերմ ընդունեց իր գրասենյակում: Ավելին, Ալիեւն ինձ օգնեց Մոսկվայում տուն ձեռք բերել: Միշտ ասում եմ, որ Հեյդար Ալիեւի շնորհիվ եմ Մոսկվայում բնակարան ձեռք բերել»:

Նրա մեկնաբանությամբ՝ հայերի ու ադրբեջանցիների միջեւ երբեք խնդիրներ չեն առաջացել, եւ հարցերը լուծել են առաջնորդները:

«Կոնֆլիկտի հիմքում կրոնն էր: Մի քանի անգրագետներ կարողացան կրոնական հողի վրա կրքեր բորբոքել: Ինչ-որ կիսաֆաբրիկատ մարդիկ կարողացան երկու ազգերի միջեւ վեճ գցել ու կրոնական հողի վրա մարդկանց դարձնել թշնամի: Մենք ոչ միշտ է, որ սիրում ենք մեր հարեւանին՝ մեզ նմանին: Մեզ դուր է գալիս ապրել նրանց կողքին, ովքեր մեզ նման չեն: Այդ պատճառով էլ հայերի ու ադրբեջանցիների համար իրար կողք լինելը հետաքրքիր է եւ հարմարավետ: Ես ողջ կյանքում ապրել եմ ադրբեջանցիների հետ կողք կողքի»:

Լրագրողի հարցին, «Այնուամենայնիվ գոյություն ունի տարածքային խնդիր: Ինչպիսի՞ լուծում կառաջարկեք տարածքային խնդիրները լուծելու համար», Ջիգարխանյանն ասել է. «Չգիտեմ»: Խոսելով հակամարտության մասին Ջիգարխանյանը հիշել ու զուգահեռներ է անցկացրել Հովհաննես Թումանյանի «Մի կաթիլ մեղր» պատմվածքի հետ:

Նշանավոր դերասանը հայտարարել է, որ ոչ թե հաճույքով, այլ վազելով կգնար Բաքու:

Ջիգարխանյանի հայտարարություններին երեկ արձագանքել է ԽՍՀՄ ժողովրդական դերասան, «Համազգային թատրոնի» ղեկավար Սոս Սարգսյանը:

«Իմաստուն միմոսի պատյանը հագնելով՝ Արմեն Ջիգարխանյանն ինքն էլ չգիտի, թե ի՞նչ է խոսում: Կարծում եմ՝ մարդ չպետք է կորցնի իր արմատները, դավաճանի հոր ու մոր արյունը, որովհետեւ դավաճանությունը բոլոր ժամանակներում պատժվել է»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ.Գ. Երեկ մենք փորձեցինք կապվել Արմեն Ջիգարխանյանի հետ, սակայն ապարդյուն: Հեռախոսը ոչ ոք չէր վերցնում: Այնուամենայնիվ հույս ենք փայփայում, որ vesti.az-ում տպագրված հարցազրույցը կամ խեղաթյուրված է, կամ ոչ ամբողջական:

## Արտաքին հարաբերություններ

# Երրորդ հանրապետության երրորդ նախագահի երրորդ տարին

*1-ին էջից*

Վերջինիս առաջին կետով Ռուսաստանի եւ Հայաստանի նորընտիր նախագահները հայտնում են իրենց վճռականությունը՝ «խորացնելու եւ ամրապնդելու բարեկամությունը երկու երկրների, ժողովուրդների միջեւ»: Հատկանշական է, որ նախագահներ Սարգսյանն ու Մեդվեդեւը շեշտում են, որ «ՀՀ-ն եւ ՌԴ-ն արդի միջազգային խնդիրների նկատմամբ ունեն համընդհանուր կամ մոտ դիրքորոշումներ եւ կարեւորում կառուցողական փոխգործակցությունը արտաքին քաղաքականության բնագավառում՝ երկկողմ հարաբերությունների ձեւաչափով, ինչպես նաեւ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի եւ այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում...»: Արդեն կոնկրետ խոսելով ԼՂ հիմնահարցի մասին, նախագահների հայտարարությունը սահմանում է. «ՀՀ-ն եւ ՌԴ-ն հանդես են գալիս ԼՂ հիմնահարցի շուտափույթ լուծման օգտին, բացառապես խաղաղ միջոցներով, արդարացի, բոլոր կողմերի (եւ կրկին ոչ՝ երկու կողմերի-Հ. Ա.) համար ընդունելի հիմքով...»: Մինչ այս կետը նախագահները վերահաստատում են իրենց պատրաստակամությունը՝ «հավատարիմ մնալու ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակներին եւ սկզբունքներին»: Հայտարարության 9-րդ կետով նախագահները հայտնում են, որ «մտադիր են ապագայում եւս ակտիվորեն նպաստել սպառազինության վերահսկողության գործընթացին՝ առանց վնասելու որեւէ պետության անվտանգությունը...»:

Արդեն երկու տարի անց՝ 2010-ի օգոստոսի 20-ին, Ռուսաստանի նախագահը Երեւանում ՀՀ նախագահի հետ պետք է ստորագրի Գյումրու ռուսական ռազմաբազայի մեր երկրում գտնվելու ժամկետը երկարաձգող եւ գործունեության բնույթը փոխող պայմանագիր, եւ դա պետք է անի նույն օրերին Գյուլ-Ալիեւ ռազմական գործակցության համաձայնագիր կնքելուն զուգահեռ: «2008-ից ի վեր մենք շուրջ 30 հանդիպում ենք ունեցել՝ երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափերով», ողջունելով իր ռուս գործընկերոջը՝ Երեւանում նշեց ՀՀ նախագահը 2010-ի օգոստոսի 20-ին: Սակայն այս վերջին հանդիպումը, ինչպես նաեւ ՀՀ նախագահը նկատեց՝ «առանձնահատուկ է, քանի որ պատմության մեջ առաջին անգամ պետական այցով Հայաստան է ժամանում Ռուսաստանի նախագահը»: Մեդվեդեւի այցի միջպետական այցերի համար նախատեսված բարձրագույն մակարդակը ամենեւին էլ պատահական չի կարելի որակել. բացի, անշուշտ, երկու երկրների առկա հարաբերությունների մակարդակը ընդգծելուց, նախագահ Մեդվեդեւը նույն օրը հենց ստորագրեց հինգ հատկանշական փաստաթղթեր՝ Հայաստանում ատոմային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցելու համաձայնագիրը, Հայաստանում ռուսական ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու արձանագրությունը եւ այլն: Վերջինիս մասով նշենք, որ փոփոխության ենթարկվեց երկու կետ. ռուսական ռազմակայանը Հայաստանում կմնա առնվազն մինչեւ տեղակայման 49 տարին լրանալը՝ պայմանագիրը եւս 5 տարով երկարաձգելու պայմանով, բացի այդ, եթե նախկինում ռազմակայանի գործունեությունը սահմանափակվում էր նախկին ԽՍՀՄ սահմաններով, ապա այժմ ռուսական կողմը պարտավորություն է վերցրել ստանձնել ՀՀ ռազմական անվտանգությունը ՀՀ ԶՈւ-ի հետ համատեղ եւ օժանդակել մեր զինված ուժերը ժամանակակից զինատեսակներով հագեցնելու գործում: Ինչպես վերը նշեցինք, դրանից մի քանի օր առաջ նախագահներ Գյուլն ու Ալիեւը արդեն իսկ ստորագրել էին «թուրք-ադրբեջանական ռազմական փոխօգնության մասին» համաձայնագիր, որտեղ «փոխօգնություն» բառը թերեւս լրացուցիչ մեկնաբանության կարիք չի տալիս: Հայ-ռուսական հարաբերությունները, իհարկե, ճիշտ չի լինի դիտարկել բացառապես երկկողմ ձեւաչափով: Երկու երկրները ակտիվորեն գործակցում են՝ մասնավորապես ԱՊՀ եւ ՀԱՊԿ շրջանակներում: Կոնկրետ ՀԱՊԿ-ի մասով, հատկանշականն անշուշտ կառույցի արագ արձագանքման զորամիավորման ստեղծումն էր, որը, փաստորեն, հնարավոր եղավ այն ժամանակ, երբ ՀԱՊԿ-ում նախագահում էր Հայաստանը: Կառույցում ընդգրկված տարբեր երկրների կողմից տարբերական դարձան «իմիջիայլոց» հիշատակումները՝ ՀԱՊԿ կանոնադրությունից. «Կազմակերպության անդամ որեւէ երկրի վրա զինված հարձակում կընկալվի որպես հարձակում ամբողջ ՀԱՊԿ-ի վրա», այս մասին բազմիցս հիշեցնում են ՀՀ արտաքին քաղաքական եւ ուժային ոլորտների պատասխանատուները, ընդհուպ նախագահը: Այս մասին հիշեցնում է նաեւ ռուսական քաղաքական վերնախավը՝ ի դեմս նախագահ Մեդվեդեւի, իսկ հիշեցնում են, կարծում ենք, ակնհայտ է, ում եւ ակնհայտ է, թե երբ հատկապես:



ԱՊՀ շրջանակում իրադարձություններից նշենք, որ նախագահը անցյալ տարիների ընթացքում տարբեր մակարդակի այցերով եղել է Ղազախստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում, Ղրղզստանում: Ամենուր նշվել է «երկկողմ գործակցությունը» խորացնելու պատրաստակամության մասին:

Առավելապես Եվրոմիության «Արեւելյան գործընկերություն» ծրագրում ընդգրկվելուց հետո Հայաստանը էլ ավելի մեծացրեց հարաբերությունները ԵՄ-ի հետ: Մասնավորապես Հայաստան եկան եվրոպական տարբեր երկրների ղեկավարներ, մեր երկրում բացվեցին նոր դիվանագիտական ներկայացուցիչներ, օրինակ, օրեր առաջ՝ Շվեյցարիայի նախագահի այցելության շրջանակներում բացվեց այդ երկրի դեսպանատունը Երեւանում: Նախագահի արտասահմանյան ուղեւորությունների զգալի մասը անցնող երեք տարիների ընթացքում հենց եվրոպական ուղղությամբ էր: Սերժ Սարգսյանը երկու տարի անընդմեջ մասնակցեց Մյունխենյան ամենամյա Անվտանգության քաղաքականության հարցերով միջազգային համաժողովին, շվեյցարական Դավոսի տնտեսական համաժողովին, պարբերական այցեր ունեցավ Բրյուսել՝ հանդիպելու ինչպես ԵՄ, այնպես էլ ՆԱՏՕ-ի ղեկավարության հետ: Ստեղծվեցին եւ իրականացվում են մի շարք համատեղ ծրագրեր՝ միտված ՀՀ առավել ժողովրդավարացմանն ու տնտեսության ազատականացմանը: Հատկանշական է, որ Հայաստանը ակտիվացրել է շփումները բալկանյան, նախկին Հարավսլավիայի մաս կազմող երկրների հետ: Մասնավորապես Երեւան եկան եւ ՀՀ նախագահին իրենց մայրաքաղաքներում ընդունեցին Սերբիայի եւ Խորվաթիայի նախագահները: Իսկ այս տարի Հայաստանի նախագահը առաջին արտերկրյա այցը կատարեց Կիպրոս եւ Հունաստան: Առավել հատկանշական է նախագահի այցելությունը «եղբայրական» որակված Կիպրոս, որը, փաստորեն, «թվացյալ» հակասություններ ունի դիրքորոշումների առումով ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման համար պայքարող Հայաստանի հետ: Նախագահ Սարգսյանը Կիպրոսում շեշտեց, որ «յուրաքանչյուր հակամարտություն առանձնահատուկ է եւ, միեւնույն ժամանակ, յուրաքանչյուր հակամարտության լուծում պետք է լինի հիմնված արդարության սկզբունքի վրա»: Նախագահ Խրիստոֆիասի հետ Սերժ Սարգսյանը այս առումով հաստատեց, որ երկու երկրները «հակամարտությունները լուծելու առումով սատարում են միմյանց դիրքորոշումները», ավելին՝ երկու նախագահների համատեղ ստորագրած հռչակագրով Կիպրոսը սատարում է ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին եւ կարծիք հայտնում, որ «հակամարտությունը պետք է լուծվի ՄԱԿ-ի կանոնադրության, Հելսինկյան եզրափակիչ ակտի հիման վրա, որոնք, ի թիվս այլոց, պաշտպանում են ԼՂ վերջնական կարգավիճակի որոշումը՝ պարտադիր իրավական ուժ ունեցող ժողովրդի կամարտահայտության միջոցով»:

Հատկանշական են նաեւ նախագահի այցերը Ֆրանսիա, մի քանիսը՝ Գերմանիա, որոնցից մեկի շրջանակներում ՀՀ նախագահը ելույթ ունեցավ «Կոնրադ Ադենաուերի» կենտրոնում՝ ներկայացնելով մեր տարածաշրջանի՝ հայ-թուրքական եւ ղարաբաղյան հարցերի վերաբերյալ Հայաստանի ունեցած «անեկղծ երկխոսություն» պահանջող տեսլականը: Առանձնահատուկ նշենք նախագահի այցելությունը Մեծ Բրիտանիա աշխատանքային այցով, որի շրջանակներում Բուքինհեմյան պալատում Հայաստանի նախագահին ընդունեց թագուհի Եղիսաբեթ Երկրորդը: Նորին Մեծության հետ ՀՀ նախագահը քննարկել է հարցեր «Հայաստանի եվրոինտեգրման գործընթացի, հայ-բրիտանական հարաբերությունների զարգացման եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման» վերաբերյալ: Լոնդոնում նախագահին ընդունեցին նաեւ Բրիտանիայի թագաժառանգ Չարլզը եւ արտգործնախարար Դեյվիդ Միլիբենդին: Այս այցելությունը տեղի ունեցավ 2010-ի փետրվարի 9-11-ը, երբ դեռ հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը ՀՀ նախագահը իր ուղերձով չէր առկախել:

Ինչ վերաբերում է ԵՄ «Արեւելյան գործընկերության» շրջանակներում ՀՀ ձեռքբերումներին, ապա նկատենք, որ այդ ծրագրում Հայաստանի ակտիվության մասին վկայող ամենախոսուն փաստը թերեւս այն է, որ Հայաստանը բանակցություններ է սկսել ԵՄ-ի հետ Միության ասոցացված անդամ դառնալու կապակցությամբ: ԵՄ-ի հետ հարաբերությունների ենթատեքստում առանձնացնենք նաեւ Միության՝ Հարավային Կովկասի երկրների համար նախաձեռնած «Սահուն անցում՝ անվտանգ սահմանով» ծրագիրը, որը Հայաստանի պարագայում հաջողությամբ կատարվում է ՀՀ Ազգային անվտանգության վերահսկողությամբ:

ԱՄՆ-ի հետ հարաբերություններում նոր որակ տեսնելու հիմքեր եւս կան: Հայաստանի նախագահը ԱՄՆ նախագահի հրավերով անցյալ տարվա ապրիլի 11-13-ը Վաշինգտոնում էր՝ մասնակցելու Գլոբալ միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին: Ապրիլի 12-ին տեղի ունեցավ Օբամա-Սարգսյան հանդիպումը: Նախագահները քննարկեցին հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման հեռանկարները, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքն ու ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման ներկա փուլը: Վաշինգտոնում նախագահին ընդունեց նաեւ պետքարտուղար Քլինթոնը, որն ավելի ուշ՝ տարածաշրջանային այցի շրջանակներում, այցելեց նաեւ Երեւան՝ ՀՀ ԱԳՆ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ անցկացնելով բացօթյա զբոսանք Հայաստանի մայրաքաղաքում: Արդեն այս տարվա սկզբին տարածաշրջանային այցով Երեւան ժամանեցին ԱՄՆ պետքարտուղարի երկու տեղակալները: ՆԱՏՕ-ի հետ գործակցությունը նույնպես արդյունավետ կարելի է որակել Հայաստանի համար: Անցյալ տարի մեր երկրում՝ Կոտայքի մարզում անցկացվեցին ՆԱՏՕ-ի «Արմենիա-2010» դաշտային վարժանքները՝ ուղղված բնական աղետների հետեւանքների վերացմանը: Հայաստան-ՆԱՏՕ արդյունավետ գործակցության վկայություն է նաեւ հայկական զորամիավորման մասնակցությունը՝ դաշինքի կողմից ղեկավարվող գործողություններում: Հիշեցնենք՝ հայկական զորախումբը գերմանական հրամանատարությամբ Աֆղանստանում պաշտպանում է Կունդուզ քաղաքի օդանավակայանի անվտանգությունը:

Անցնող 3 տարում մեր երկրի արտաքին քաղաքականության համար բացվեցին նաեւ նոր ուղղություններ. Չինաստան. «Չինաստանը մեզ համար բարեկամ երկիր է: Հարաբերությունների ներկա բարձր մակարդակն ամուր իրավական հիմքեր ունի, որը ներառում է ստորագրված ավելի քան 40 միջպետական եւ միջկառավարական համաձայնագրեր: Քաղաքական հարթությունում մեր հարաբերությունները բնորոշվում են տարածաշրջանային եւ միջազգային հիմնական խնդիրների վերաբերյալ համընկնող կամ մոտ տեսակետների առկայությամբ», այս մասին հայտարարեց Չինաստան այցելած ՀՀ նախագահը՝ չինական «Սինհուա» տեղեկատվական գործակալության՝ 2008-ի օգոստոսի 7-ին տված հարցազրույցում: ՀՀ նախագահի երկրորդ այցելությունը Չինաստան հիմնավորված էր «Շանհայ՝ Էքսպո-2010» համաշխարհային ցուցահանդեսի բացմանը մասնակցելով: 2010-ի մայիսի 2-ին Սերժ Սարգսյանին ընդունեց Չինաստանի նախագահ Հու Ձինթաոն: Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահը շեշտեց, որ Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումը Հայաստանի քաղաքականության առաջնահերթություններից է: Նախագահները քննարկեցին նաեւ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցմանը Չինաստանի մասնակցության հարցերը: Այցի շրջանակներում ՀՀ նախագահը եղավ նաեւ Շանսի նահանգում գործող «Շանսի-Նաիրիս» հայ-չինական համատեղ ձեռնարկությունում, որն, անշուշտ, կարելի է գնահատել որպես երկկողմ կապերի զարգացման փայլուն վկայություն: Արդեն այս տարի մեր երկիր ժամանեց Չինաստանի արտգործնախարարը: Վերջինիս այցն, ի դեպ, տարածաշրջանային չէր, ինչը հատկապես խոսում է այն հանգամանքի մասին, որ մեր երկիրը նույնպես Չինաստանի համար կարեւոր նշանակություն ունի: Չին նախարարը վերահաստատեց, որ իր երկիրը ցանկանում է մասնակցել Իրան-Հայաստան երկաթգծի շինարարությանը:

Դեպի Արեւելք քաղաքականության մեջ մեր երկիրը պահպանեց ավանդական լավ հարաբերությունները արաբական աշխարհի հետ: Նախագահը այցելեց Քուվեյթ եւ Սիրիա, Երեւանում ընդունելով նաեւ վերջինիս նախագահ Բաշար ալ Ասադին: Դեր Զորում ունեցած ելույթում Հայաստանի նախագահը հռետորական հարց ուղղեց. «Ասում են, որ Դեր Զորը հայերի Օսվենցիմն է, այժմ ուզում եմ հարցնել, իսկ ե՞րբ եւ որտե՞ղ է հայերի Նյուրնբերգը»: Ինչպես Երեւանում, որտեղ անկախությունից ի վեր Սիրիայի նախագահի առաջին այցը տեղի ունեցավ 2009-ի հունիսի 17-ին, այնպես էլ Սիրիայում, որտեղ նախագահ Ասադը ընդունեց իր հայ գործընկերոջ՝ 2010-ի մարտի 22-24-ը, երկու նախագահները վերահաստատեցին, որ Հայաստան-Սիրիա հարաբերությունները պետք է դիտարկել պատմական փոխադարձ համակրանքի տեսանկյունից: Սիրիայում Հայաստանի նախագահը իր սիրիացի գործընկերոջը շնորհակալություն հայտնեց՝ «մեր ժողովրդի պատմության օրհասական պահերին Սիրիայի ցուցաբերած անգնահատելի օգնության համար»: Քուվեյթը դարձավ Հայաստանի նախագահի այցելած առաջին երկիրը Պարսից ծոցի տարածաշրջանում: 2009-ի ապրիլի 3-4 պետական այցով լինելով արաբական այդ երկրում՝ նախագահը ունեցավ տարբեր հանդիպումներ Քուվեյթի ղեկավարության հետ: Մասնավորապես Քուվեյթի ներդրումների հիմնադրամի տնօրեն Բադեր Մոհամմեդ ալ Սաադին ՀՀ նախագահի հետ հանդիպման ընթացքում, որպես իրենց հիմնադրամի՝ Հայաստանում իրականացվելիք ներդրումների հավանական ոլորտներ նշեց էներգետիկայի, գյուղատնտեսության, անշարժ գույքի, լեռնահանքային արդյունաբերության բնագավառները: Արդեն Քուվեյթի վարչապետի հետ հանդիպման ժամանակ զրուցակիցները շեշտեցին, որ «հայ եւ արաբ ժողովուրդների փոխադարձ հարգանքն ու դրական զգացումները այն պարարտ հողն են, որ հնարավորություն են տալիս համագործակցելու տարբեր ոլորտներում»:

...Ավարտելով իր հարցազրույցը գերմանացի պրոֆեսոր Թիլման Ալերթի հետ՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նշել էր. «Երբ Ադրբեջանը ճանաչի ԼՂ ինքնորոշման իրավունքը, Լեռնային Ղարաբաղը հռչակվի կամ անկախ երկիր, կամ միանա Հայաստանին, դա իմ կյանքի ամենաերջանիկ օրը կլինի...»

# Կիպրացի թուրքերը պահանջում են Թուրքիայի հեռացումը Կիպրոսից

*Հույների հետ մերձեցումը սրում է թուրքիացի վերաբնակների հետ նրանց հարաբերությունները*



Թուրքական զորքերը Կիպրոս են ներխուժել 1974-ի հուլիսին, գրավելով նրա հյուսիսային հատվածը, որը կղզու տարածքի 36,2 տոկոսն է կազմում: 1983-ի նոյեմբերի 15-ին գրավյալ հատվածում հռչակվել է «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը»: Թեեւ ինքնագոչ այս հանրապետությանը Թուրքիայի հետ ճանաչել էր նաեւ Բանգլադեշը, սակայն ԱՄՆ-ի ճնշմամբ իսկույն չեղյալ է հայտարարել իր իսկ ընդունած որոշումը, ընդ որում՝ ճանաչելու հաջորդ օրը:

Նախքան թուրքական զորքերի ներխուժումը կիպրացի թուրքերը բնակչության 18 տոկոսն էին կազմում Կիպրոսում: Այս ցուցանիշը հյուսիսային հատվածում հասնում էր 24 տոկոսի: Այսինքն՝ 1974-ին, ինչպես հյուսիսային հատվածի «Ենի դուզեն» թերթի փետրվարի 9-ի համարում գրել է Օյա Բայդարը, շուրջ 150 հազար կիպրացի թուրքեր են բնակվել Կիպրոսում, որոնցից 40 հազարը թուրքական զորքերի ներխուժման հետ սկսել են հեռանալ կղզուց, բնակություն հաստատելով գլխավորապես Անգլիայում:

2006-ի մարդահամարի տվյալներով, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» բնակչությունը 245 հազար է: Քանի որ վերջին 15 տարիներին թուրքական հատվածում բնակություն հաստատող Թուրքիայի թուրքերը, միջազգային հակազդեցությունից խուսափելու նկատառումով, ընդհանուր առմամբ չեն գրանցվում, ուստի Բայդարը ենթադրում է, որ Հյուսիսային Կիպրոսի թուրք բնակչությունն ավելի քան 300 հազար է: Այդ ընթացքում շարունակվում է կիպրացի թուրքերի արտագաղթը:

Այլ կերպ, հակառակ կիպրացի թուրքերի թվաքանակի նվազմանը, Կիպրոսի հյուսիսային հատվածում վերաբնակեցման հետեւանքով անընդհատ աճում է թուրքիացիների թիվը, որոնք իրենց նոր սերունդով հանդերձ, ներկայումս թուրքական հատվածի բնակչության 2/3-ն են կազմում: Սա նշանակում է, որ թուրքական զորքերի Կիպրոս ներխուժման եւ կղզու հյուսիսային հատվածի օկուպացման թերեւս ամենաշոշափելի արդյունքը բնիկ կիպրացի թուրքերի թվաքանակի նվազումն է: Հիմք ընդունելով այս փաստը, Բայդարը Հյուսիսաին Կիպրոսը թուրքացնելու Թուրքիայի քաղաքականության ձախողման հետեւությունն է անում:

Ինչ վերաբերում է կիպրական հիմնահարցին, ապա դրա կարգավորումը ենթադրում է կարգավորող կողմի վերահսկողությունն Արեւելյան Միջերկրականում, Մերձավոր եւ Միջին Արեւելք ներթափանցման հեռանկարով: Մինչդեռ ԱՄՆ-ը, ունենալով տարածաշրջանում միանձնյա ռազմական ներկայություն, շատ խանդոտ վերաբերմունք է ցուցաբերում ներթափանցման դրսեւորումներին:

Դա պատճառ է դառնում, որ Կիպրոսում անհաշտ մրցակցություն ծավալվի ԱՄՆ-ի եւ Եվրոմիության միջեւ: Թուրքիան, օգտագործելով մրցակցության հանգամանքը, հիմնահարցի կարգավորվածությունը Հյուսիսային Կիպրոսն իր սահմաններին կցելու նկրտումներով պայմանավորում է չկարգավորվածությամբ: Չնայած ՄԱԿ-ի 1974-ից ի վեր ընդունած ավելի քան 3200 որոշման, կղզին 37 տարի շարունակ մնում է մասնատված, ոչ միայն չի հաջողվում վերականգնել Կիպրոսի միասնականությունն ու նրա տարածքում տեղակայված թուրքական 40-հազարանոց զորքերի դուրսբերումը, այլեւ Թուրքիան ԵՄ-ի հետ անդամակցության բանակցություններ վարելու պայմաններում կարողանում է հրաժարվել ճանաչելու եվրոպական այս կառույցի անդամ Կիպրոսի Հանրապետությանը:

Միջազգային ասպարեզում Հյուսիսային Կիպրոսը մեկուսացնելու, դրածո կառավարության, բանակի եւ բյուրոկրատիայի միջոցով կառավարման մեխանիզմները վերահսկելու, այդ մեխանիզմներից կիպրացի թուրքերին աստիճանաբար դուրս մղելու, կղզին թուրքիացիներով վերաբնակեցնելու պատճառներով Թուրքիայի նկատմամբ բուռն հակազդեցություն է առաջացել հյուսիսային հատվածում: Ինչպես Գյուների Ջիվաօղլուն էր գրել «Միլլիեթի» փետրվարի 10-ի համարում, հակազդեցության պայմաններում կիպրացի թուրքերը հետզհետե հեռանալով Թուրքիայից մերձեցել են հունական հատվածին, զուգահեռաբար սրվել են նաեւ նրանց հարաբերությունները վերաբնակների հետ:

Հյուսիսային Կիպրոսում կիպրացի թուրքերի հակազդեցությունն արտահայտվել է հունվարի 28-ին Նիկոսիայում «Արհմիությունների պլատֆորմի» կազմակերպած «Հասարակական գոյատեւման» հանրահավաքով, որին մասնակցել էր 25 հազար մարդ. մասնակիցները Թուրքիային եւ թուրքական բանակին նսեմացնող ցուցապաստառներ էին բարձրացրել:

Նույն վերնագրով եւ բովանդակությամբ երկրորդ հանրահավաքը կազմակերպվել էր մարտի 2-ին, իսկ ապրիլի 7-ին կազմակերպվեց հանրահավաքներից երրորդը, որի ընթացքում ցուցարարներն արդեն բախվել են ոստիկանության հետ, ինչպես թուրքական հատվածի խորհրդարանի, այնպես էլ Նիկոսիայի թուրքական հատվածում տեղակայված Թուրքիայի դեսպանատան առջեւ, նորից բարձրացնելով «Թուրքիա ս... եղիր Կիպրոսից» մակագրությամբ պաստառը: Մյուս պաստառներն ունեցել են «Ֆաշիզմի դեմ ուս-ուսի», «Անկարա, ձեռքդ քաշիր մեր օձիքից», «ոստիկանական պետություն չենք դառնալու» մակագրությունները:

Ապրիլի 7-ին Նիկոսիայի թուրքական հատվածում կազմակերպված հանրահավաքի մասնակիցները, Թուրքիայում եւ Հյուսիսային Կիպրոսում հրատարակվող թերթերի վկայությամբ, հավաքվել են «Շեհիդների» հրապարակում, ապա շարժվել են դեպի մինչ այդ փշալարերով ոստիկանության պատնեշած «Հանրապետական Մեջլիս», «օկուպանտ Թուրքիա, ռադ եղիր Կիպրոսից» ցուցապաստառը ցուցարարից խլելու ոստիկանության փորձը բախումների պատճառ է դարձել:

Ցուցարարներն այնուհետեւ շարժվել են Թուրքիայի դեսպանատուն: Ցուցարարների մի խումբ փորձել է իջեցնել Թուրքիայի դրոշը, Կիպրոսի Հանրապետության դրոշով փոխարինելու նկատառումով: Պահակախմբին մի կերպ հաջողվել է կասեցնել այս խմբին: Այդ ընթացքում մեկ այլ խումբ դեսպանատան ցանկապատին ամրացրել է Կիպրոսի դրոշը, ինչը քաշքշուկի տեղիք է տվել: Այնտեղ հնչել են կիպրոսում տեղակայված թուրքական զորքերին նսեմացնող, Թուրքայի կառավարության, քաղաքական կուսակցություններին, պատգամավորներին եւ Մեջլիսին դատապարտող կարգախոսներ:

Ինչպես կարձագանքի Թուրքիան այս ամենին, դժվար է կռահել: Բայց որ թուրքական ամեն մի արձագանք կիպրացի թուրքերին էլ ավելի է հեռացնելու Թուրքիայից, նպաստելով հույների հետ նրանց հետագա մերձեցմանը, ակնհայտ է: Ավելի քան ակնհայտ է , որ այս մերձեցմամբ թուրքական հատվածում սրվելու են վերաբնակների հետ կիպրացի թուրքերի հակասությունները, եւ Թուրքիայի առջեւ աստիճանաբար ծառանալու է նաեւ կիպրացի թուրքերի հիմնահարցը:

**ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ**

ԿԱՐԿՈՒՏԸ ՇԵՇԱԾ ՏԵՂՆ Է ՇԵՇՈՒՄ

# Ճապոնիայում նոր երկրաշարժից փոքր-ինչ վնասվել է Օնագավայի ԱԷԿ-ը

**Ճապոնիայի ափերի մոտ հինգշաբթի երեկոյան տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից զոհվել են 3 եւ վիրավորվել 130 անձինք: Ճշգրտված տվյալների համաձայն, ցնցման մագնիտուդը եղել է ոչ թե 7,4 (ինչպես հաղորդվել էր սկզբում), այլ 7,1: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ ստորգետնյա ցնցումների էպիկենտրոնը եղել է մարտի 11-ի սաստիկ երկրաշարժից լրջորեն տուժած Սենդայ քաղաքից 66 կգ հեռու:**

**Նոր երկրաշարժը լրացուցիչ վնասներ չի պատճառել Ֆուկուշիմայի ԱԷԿ-ին, որտեղ դարձյալ ռադիոակտիվ ջուր է արտահոսում: Սակայն հաղորդվում է, որ աննշան չափով վնասվել է Օնագավայի ԱԷԿ-ը, որտեղ մանր ճեղքերից 9 լիտր ռադիոակտիվ ջուր է արտահոսել: Այդ ատոմակայանը կանգնեցված է արդեն 1 ամիս: Ջուրն արտահոսել է առաջին եւ երկրորդ ռեակտորների բանեցված վառելիքի պահպանման ավազաններից:**

**Նոր երկրաշարժը էլեկտրամատակարարման խափանումներ է առաջացրել Միագիի, Աոմորիի, Իվատեի, Ակիտայի եւ Յամագատայի պրեֆեկտուրաներում:**

# ՆԱՏՕ-ն ներողություն խնդրեց լիբիացի ապստամբներից

**ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները լիբիացի ապստամբներից ներողություն են խնդրել սխալ ռմբակոծության համար, որի հետեւանքով ապստամբները կորուստներ են կրել: Այդ մասին հաղորդում է BBC-ն, վկայակոչելով ընդդիմության ռազմական գործողությունների ղեկավար, գեներալ Աբդել Ֆաթթահ Յունիսին:**



**Ապստամբների դիրքերի վրա ՆԱՏՕ-ի օդուժի կատարած գրոհի մասին հայտնի էր դարձել ապրիլի 7-ին: Տարբեր տեղեկությունների համաձայն, սխալ ռմբակոծման հետեւանքով սպանվածների թիվը 5-ից մինչեւ 13 է:**

**Յունիսը ՆԱՏՕ-ի ներկայացուցիչների հետ զրուցելիս վրդովմունք է արտահայտել միջադեպի առնչությամբ: Նրա խոսքերով, ապստամբները արեւմուտքի դաշնակիցներին նախօրոք զգուշացրել էին, որ մտադիր են զրահատեխնիկան տեղափոխել Աջդաբիայից դեպի հարեւան Բրեգա: Հենց այնտեղ էլ շարասյունը ռմբակոծության էր ենթարկվել:**

**ՆԱՏՕ-ում հայտարարել են, որ այդ շրջանում մեծապես տեխնիկայի տեղաշարժեր են նկատվում, եւ որ իրենք կփորձեն քննել ու պարզել միջադեպի պատճառը:**

**Սա առաջին սխալ գրոհը չէ ապստամբների դիրքերի վրա: Սկզբում Քադդաֆիի հակառակորդները ըմբռնումով էին վերաբերվում նման միջադեպերին, բայց վերջերս գեներալ Յունիսը հանդես էր եկել ՆԱՏՕ-ի քննադատությամբ («Ազգը» գրեց այդ մասին): Նա մասնավորապես դժգոհություն էր հայտնել, որ ՆԱՏՕ-ն դանդաղ է արձագանքում կառավարական զորքերի տեղաբաշխմանը վերաբերող տեղեկություններին:**

# Սիրիայի նախագահը քաղաքացիություն կշնորհի քրդերին

*Բայց արտակարգ դրությունը պահպանվում է*

**Սիրիայի նախագահ Բաշար Ասադը ստորագրել է սոցիալական լարվածության թուլացմանն ուղղված մի շարք կարգադրություններ: Ֆրանսպրեսի տվյալներով, նա մասնավորապես հրամայել է սիրիական անձնագրեր տալ երկրի հյուսիսարեւելյան շրջաններում համահավաք ապրող քուրդ փոքրամասնության ներկայացուցիչներին:**

**Ըստ կառավարության ծրագրի, քաղաքացիություն կստանա մոտ 300 հազար մարդ, որոնք, սիրիական օրենքների համաձայն, 1962-ից պաշտոնապես համարվում են օտարերկրացիներ:**

**Հյուսիսարեւելյան շրջանների 300 հազար քրդերը կազմում են Սիրիայի բոլոր քրդերի (1,5 մլն) 20 տոկոսը: Քուրդ ազգաբնակչությունն իր հերթին կազմում է Սիրիայի ամբողջ բնակչության 10 տոկոսը: 300 հազար քրդերը մինչեւ օրս օտարերկրացի են համարվել այն հիմունքով, որ Սիրիա են տեղափոխվել հարեւան Թուրքիայից:**

**Անցած հինգ տասնամյակներին քուրդ փոքրամասնությունը տարբեր բողոքի ցույցեր է արել ընդդեմ սեփական իրավունքների ոտնահարման: Գլխավոր բողոքն այն էր, որ օտարերկրացի համարվող 300 հազար քրդերին արգելված էր պաշտոններ զբաղեցնել պետական հիմնարկներում: Բացի դրանից, առանց անձնագրերի նրանք չէին կարողանում մեկնել արտասահման:**

**Նախագահ Ասադը նաեւ վերացրել է ուսումնական հաստատություններում կանանց դեմքը ծածկող «նիկաբ» կրելու արգելքը: 2010-ից գործող արգելքը կոչված էր ընդգծելու պետության աշխարհիկ բնույթը:**

**Սիրիայում բացարձակ մեծամասնություն կազմող մահմեդականները գտնում էին, որ այդ արգելքը սահմանափակում է իրենց մասնավոր կյանքի իրավունքը:**

**Սիրիայի մի շարք քաղաքներում երկու շաբաթ տեւած անկարգություններից հետո երկրի ղեկավարությունը խոստացել էր քաղաքական, տնտեսական եւ հասարակական ոլորտներում սկսել կառուցվածքային բարեփոխումներ: Ցուցարարները պահանջում էին ընդհանուր ժողովրդավարացում, պետական վերահսկողության թուլացում եւ կենսապայմանների բարելավում:**

**Բնակչությանը հանդարտեցնելու նպատակով Բաշար Ասադը խոստացել էր մի շարք միջոցներ ձեռնարկել: Մասնավորապես մարտի վերջերին հայտարարվել էր, որ վերացվելու է 1960-ականների սկզբից երկրում գործող արտակարգ դրությունը: Բայց մինչեւ օրս այն չեղյալ չի հայտարարվել:**

# Կոսովոյի նախագահը կին ոստիկան է



**Կոսովոյի խորհրդարանը երկրի նախագահ է ընտրել Աթիֆետա Յահյագային: Այդ կինը ինքնահռչակ հանրապետության ոստիկանության գլխավոր տնօրենի տեղակալն է: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ խորհրդարանում քվեարկության ժամանակ Յահյագայի օգտին քվեարկել է 80 պատգամավոր: Մյուս թեկնածու Սուզանա Նովոբրդալիան ստացել է 10 քվե: 10 պատգամավոր ձեռնպահ է մնացել:**

**Ավելի վաղ Յահյագայի թեկնածությունը ներկայացրել էր վարչապետ Հաշիմ Թաչին, ասելով, որ տվյալ թեկնածությունը պաշտպանում են նաեւ Կոսովոյի «Դեմոկրատական դաշինք» կուսակցության նախագահ Իսա Մուստաֆան, նախկին նախագահ Բեջեթ Պակոլլին եւ ԱՄՆ դեսպան Քրիստոֆեր Դելը: Բացի դրանից, ձեռք է բերվել համաձայնություն, ըստ որի այդ նախկին սերբական երկրամասում շուտով անցկացվելու է սահմանադրական բարեփոխում, եւ նախագահն ընտրվելու է ուղիղ քվեարկությամբ:**

**Մասամբ ճանաչված Կոսովոյի նախկին նախագահը՝ ալբանացի մեծահարուստ Բեջեթ Պակոլլին կառավարել էր մեկ ամսից քիչ ավելի, Սահմանադրական դատարանն անօրինական էր ճանաչել նրա ընտրության արարողակարգը:**

# Ազգային պատկերասրահի ցուցանմուշները թվայնացվում են

## Նոր ցուցահանդեսներ առաջիկայում

Ազգային պատկերասրահում եւ նրա 11 մասնաճյուղերում այսօր հավաքագրված է 26.000 ցուցանմուշ: ՀՀ վարչապետի հանձնարարականով սկսվել է դրանց լուսանկարումն ու թվայնացումը: Ինչպես «**Ազգի**» հետ զրույցում տեղեկացրեց պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր **Փարավոն Միրզոյանը**, արդեն ողջ հավաքածուներից 90 %-ը թվայնացվել է եւ շուտով կլինի այդ կայքի պաշտոնական բացումը, որով աշխարհը կտեղեկանա մեր ազգային գանձարանում եղած արժեքներին: Մինչ 2011թ. անելիքներին անդրադառնալը, պրն Միրզոյանը ամփոփելով անցած տարին, նշեց կատարված աշխատանքներից մի քանիսը: «2010-ը մեզ համար շատ կարեւոր նշանակություն ունեցավ, քանզի մենք կարողացանք Մոսկվայի Պուշկինյան թանգարանում ներկայացնել տարբեր տարիներին ստեղծված հայ եւ ռուս գեղանկարչությունը: Ազգային պատկերասրահի 90-ամյա պատմության մեջ դա անդրանիկ ցուցադրությունն էր, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Հաջորդ կարեւոր ձեռքբերումը՝ Հոլանդիայի Գրոնինգեն քաղաքի նույնանուն թանգարանում առաջին անգամ ցուցադրվեցին հայ անվանի գեղանկարիչների 10 աշխատանքները՝ Սուրենյանց, Սարյան, Կոջոյան...: Չորս ամիս է ցուցահանդեսը բաց է այցելուների համար եւ դեռ կշարունակի գործել մինչեւ մայիսի 10-ը», ասաց պրն Միրզոյանը: Նման ցուցահանդեսների կազմակերպումը կարեւորելով, պատկերասրահի տնօրենը շեշտեց, որ այդ ամենի արդյունքում արդեն մի քանի հայտնի թանգարաններից ստացվել են առաջարկություններ իրենց մոտ նույնպես կազմակերպելու ցուցահանդեսներ: Արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել անվանի գեղանկարիչ Գեորգի Յակուլովի կտավների ցուցահանդեսի կազմակերպման մասին: Այս տարի պատկերասրահում բացվել են հնդիկ նկարչուհու, լիտվացի գեղանկարիչ Չոռլոնիսի ցուցահանդեսները: Իսկ սեպտեմբեր ամսին ՀՀ-ում Բրազիլիայի դեսպանության համագործակցությամբ կբացվի հատուկ ցուցադրություն՝ նվիրված Բրազիլիայի ազգային տոնին:



Պատկերասրահի տնօրենը շատ կարեւորեց ճանաչված գեղանկարիչ Հովհաննես Տեր-Թադեւոսյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Այնուհետեւ ցուցահանդեսների շարքը լրացվում է մեկ աշխատանքի ցուցադրություններով, որոնցում տեղ են գտել Երվանդ Քոչարի տարածական նկարչությունը շարքից մի նմուշ (1927 թ.) եւ Ժանսեմի «Նատյուրմորտ» (1955 թ.) աշխատանքները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Մոսկվայի Պուշկինյան թանգարանի հետ, որպեսզի իմպրեսիոնիստների գործե մեկական ստեղծագործություն ցուցադրվի մեր Ազգային պատկերասրահում: Հունիս ամսին կբացվի «Սյուռռեալիզմը եւ Սալվադոր Դալին» ցուցահանդեսը, որի ցուցանմուշները կբերվեն ԱՄՆ-ից: Բացի այդ, կլինեն մի շարք հոբելյանական ցուցահանդեսներ՝ նվիրված գեղանկարիչներ Հմայակ Հակոբյանի՝ 140, Հովհաննես Ալխազյանի՝ 130 եւ Ռոբերտ Ֆալկի 125-ամյակներին: Լեհաստանի դեսպանության հետ համագործակցության արդյունքում Երեւան կտեղափոխվեն Վարշավայի ազգային թանգարանում ցուցադրվող «Հայացք դեպի Արարատ» խորագիրը կրող ցուցանմուշները, որոնցում պատկերվում է հայերի կյանքը Լեհաստանում՝ վաղնջական ժամանակներից: Բացի լուսանկարներից, ցուցանմուշներում տեղ կգտնեն տարբեր բնագավառներում աշխատած ու ստեղծագործած հայերի անձնական իրեր, արժեքավոր մասունքներ: Տարին կամփոփվի ԱՄՆ-ում բնակվող հայ երկու գեղանկարիչների՝ Ռաֆայել Աթոյանի եւ Աշոտ Մելքոնյանի անհատական ցուցահանդեսներով:

«**Ազգը**» փորձեց պրն Միրզոյանից ճշտել վերջին օրերին շնորհակալագիրը չընդունելու վերաբերյալ տպագիր եւ էլեկտրոնային մամուլում հրապարակված տարատեսակ կարծիքների մասին: «Այո, դուք ճիշտ եք, եւ այն, ինչ որ մեկնաբանվել է, խեղաթյուրվել է իմ ասածը եւ ոչ ճիշտ է մեկնաբանվել: Պետական որեւէ պարգեւ՝ լինի դա շնորհակալագիր թե այլ, արժանի է մեծ հարգանքի, բայց ի՞նչ եւ ո՞ւմ: Երբ ինձ երիտասարդ տարիքում պարգեւատրեցին, դա ինձ մեծ ստիմուլ տվեց...: Հավատացեք, դա միայն իմ անձին չի վերաբերում: Կյանքի մեծ ճանապարհ անցած եւ պետական մեծ պարգեւների արժանացած արվեստագետին, ինչու միայն արվեստագետին, այլ նաեւ յուրաքանչյուր մարդու պետք է համապատասխան վերաբերմունք՝ ժամանակին: Այ սա է իմ անձնական կարծիքը»:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

EditionsParenthèses

# Մարսելում լույս տեսավ Ա.Ա. Հայրապետյանի նոր գիրքը

Մարսելի «Պարանթեզ» հրատարակչությունը լույս է ընծայել ֆրանսահայ գրող **Անրի Արամ Հայրապետյանի** «Ասա նրան իր անունը» գիրքը, որը նրա առաջին վեպն է: Գիրքը Ֆրանսիայի, Բելգիայի, Շվեյցարիայի, Կանադայի գրախանութներում վաճառքի է հանվել ապրիլի 7-ից:





Հրատարակչությունը տեղեկացնում է, որ 160 էջանոց գիրքը հիշեցնում է ժամանակագրություն, որտեղ միախառնվում են տարբեր երկրների ու բնակավայրերի հետ կապված հուշեր: Ճամպրուկ, նոթատետր, խամրած լուսանկարներ, լրագրերի կտրածոներ, Լա Ռոշել, Կիպրոս, Աթենք, զենքեր, դիվանագետներ, մահափորձեր... Ամեն ինչ կոչված է ծառայելու Ժանի հիշողության վերականգնմանը: Հետաքրքրությամբ ընթերցվող պատմությունը սկիզբ է առնում մեկ դար առաջ եւ վերահայտնվում 1970-ականներին, ավարտվելով «կովկասյան մի մայրաքաղաքում, խորհրդանշական լեռան ստվերում»: Ասել սեփական անունը միշտ նշանակում է վերագտնել սեփական արմատները:

Անրի Արամ Հայրապետյանը փաստաբան է, ապրում եւ աշխատում է Դինում (Գարի դեպարտամենտ): Բորդոյում եւ Փարիզում կերպարվեստ ուսումնասիրելուց հետո զբաղվել է հրատարակչական գործով, աշխատել Radio France-ում, մուտք գործել երգի ու ձայնապնակների ոլորտ, իսկ հետո Կառարի եւ Պարոսի քարհանքերը նրան հիշեցրել են իր հայկական արմատները: Ֆրանսիայում եւ Գերմանիայում մասնակցել է մի շարք ցուցահանդեսների: Իր վեպի լույսընծայումից առաջ հրատարակել էր «Տիկինը կամ մարմարյա սեր Միջերկրականում» (1997), «Ծաղկաթերթեր եւ փաթիլներ» (2006), «Փոքրիկ սիրային նամակի չարաճճի եւ անկաշկանդ արկածը» (2009) գրքերը:

# Մայրության եւ գեղեցկության օրը Մոսկվայում բացվել է երիտասարդ հայ գեղանկարիչների ցուցահանդեսը

Նախօրեին՝ Մայրության եւ գեղեցկության օրը, Մոսկվայի «Երեւան պլազա» կենտրոնում տեղի ունեցավ ռուսաստանաբնակ երիտասարդ հայ գեղանկարիչների «Գեղեցկությունից մինչ խենթություն» ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսին ներկայացված են հայազգի 17 նկարիչների մոտ 50 աշխատանքներ:

Բացման արարողությանը ներկա են եղել արվեստի եւ մշակույթի գործիչներ, դիվանագետներ, ռուսական սփյուռքի հայ բիզնես-էլիտայի ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսը կտեւի մինչեւ ապրիլի 24-ը եւ բաց կլինի ամեն օր, ժամը 10-22-ը:

ՄԱՏԵՆԱՇԱՐ

# «Արեգի բառարանները»

## Հերթականը՝ «Հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն»

**Հայաստանյան գրահրատարակչական դաշտում «Արեգ» հրատարակչությունը անփոխարինելի տեղ եւ կայուն գործունեություն ունի՝ նախ եւ առաջ հստակ ուղղվածությամբ, պոլիգրաֆիական պատշաճ մակարդակով ու գրագիտությամբ, պահանջարկային գրականության տպագրությամբ: Այս ամենում իր դերն ունի նաեւ տնօրենի՝ Սամվել Գասպարյանի վերաբերմունքը գրին, մշակույթին, գիտությանը եւ իհարկե՝ գրահրատարակչական ոլորտի բազմամյա փորձն ու հմտությունը, եւ ինչպես հաճախ բնութագրում է նրան «Գրքերի աշխարհ» («Բուկինիստ») գրատան տնօրեն Խաչիկ Վարդանյանը, «մարդ-նվագախումբ», որը հիմնականում անհատապես է կազմակերպում աշխատանքները: Գրատան տնօրենի վկայությամբ, այս հրատարակչության գրքերը պահանջարկ ունեն եւ միշտ վաճառվում են, որովհետեւ դրանց ճիշտ ընտրություն է կատարվում եւ ճիշտ մարկետինգ կազմակերպվում»:**





**«Արեգը» մասնագիտացված սակավ հրատարակչություններից մեկն է՝ գերազանցապես բառարանային եւ հանրագիտարանային բնույթի գրականության ուղղվածությամբ: 1995-ականներից սկսած հրատարակչատունը լույս է ընծայել շուրջ 13 բառարան ու զրուցարան, 5 հանրագիտարան եւ այլ գրքեր:**

**«Արեգի բառարանները» մատենաշարի հերթական երկլեզվյան բառարանը «Հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն» 55.000 բառ եւ բառ-արտահայտություններով հրատարակությունն է: Բառարանը կազմել են Սամվել Գասպարյանը եւ պետհամալսարանի դասախոս Մարիամ Կիրակոսյանը: Տպագրված է «ՄՀՄ Գրատուն» տպագրատանը:**

**Բառարանը (1000 էջ) հագեցած է ժամանակակից հայերենի եւ ռուսերենի հարուստ բառացանկով՝ «Հայերեն-ռուսերեն» բաժնում՝ 25.000, «Ռուսերեն-հայերեն»-ում ավելի քան 30.000 բառ եւ արտահայտություն՝ ամենատարբեր՝ գրականության, մշակույթի, քաղաքագիտության, իրավագիտության, դիվանագիտության, ֆինանսների, սպորտի, հոգեւոր, գիտատեխնիկական եւ այլ ոլորտներին վերաբերող: Այն կարելի է համարել արդիական, վերջին շրջանում լայնորեն շրջանառվող, ոչ միայն տեխնիկական առաջընթացով պայմանավորված նոր երեւույթների ու հասկացությունների, նաեւ մեր իրականության, ժամանակակից կյանքի ծնունդ լեզվական միավորների ներառմամբ: Բառարանը պարունակում է նաեւ հայերեն եւ ռուսերեն ամենագործածական առածներ ու ասացվածքներ, խոսակցական լեզվի հարուստ բառապաշար, այդ թվում եւ՝ ժարգոնային բառեր, նաեւ աշխարհագրական տեղանունների ընդգրկման ցանկ: Հասցեագրված է հանրակրթական դպրոցներին, բարձրագույն հաստատություններին, թարգմանիչներին եւ առհասարակ ռուսերենով հետաքրքրվողներին:**

**տեխնիկական նաեւ ստեղծագործական աշխատանքներ պահանջեց: «Փորձեցինք նոր բառարան ստեղծել, այսինքն՝ ընդգրկել հայերենում եւ ռուսերենում արտահայտված նորաբանությունները, նորաստեղծ բառերը, որոնք քննություն, իհարկե, ժամանակի ընթացքում կբռնեն»:**

**Բառարանի մասնագիտական դիտարկումը թողնենք բառարանագետներին: Ասենք միայն, որ հրատարակչական նախընթաց գործունեությունն այս ոլորտում ոչ միայն արդյունավետ էր, նաեւ հաջողված: Այսպես՝ Հայաստանում «Հայերեն-անգլերեն»՝ 1995-ին, ապա եւ 1998-ին «Հայերեն-ֆրանսերեն» բառարանների առաջին հրատարակությունների իրավունքը «Արեգ»-ինն է: «Ամբողջ 70 տարիների ընթացքում ստեղծվել էր ընդամենը 8.000 բառանոց «Ֆրանսերեն-հայերեն» բառարանը՝ չխոսած իսպաներենի, իտալերենի եւ մյուս լեզուների մասին, որոնք առհասարակ չկային: Այսօր դաշտը անհամեմատ հագեցած է: Մասնագիտական լավ բառարաններ տպում է «ՄանՄարը» («Մակմիլան-Արմենիա»), «Ֆրանսերեն-հայերեն», «Հայերեն-ֆրանսերեն» 2 ընտիր բառարան հրատարակեցին «Փրինթինֆոն» եւ ԵՊՀ հրատարակչությունը, կան նաեւ «Անկյունաքարը» եւ «Գիտանքը»:**

**Ի դեպ, «Արեգ»-ի «Հայերեն-ֆրանսերեն» բառարանը բավական հաջողություն ունեցել է Ֆրանսիայում, այդ մասին տեղեկացրեց ֆրանսահայ, Փարիզի «Սիժեստ» հրատարակչատան տնօրեն Վարուժան Սիրապյանը, որի հետ համագործակցություն «Արեգը» սկսել է տարիներ առաջ. «Սամվելը այնանկ մեկն է, որ ինձի Հայաստանը սիրեցնել տվավ իր անձովը եւ իր արած գործովը: Չէինք հավատացած, որ նման գիրք մը կրնար վաճառվիլ Ֆրանսայի մեջ, քանի որ արեւելահայկական էր ուղղագրությունը: Սփյուռքի մեջ, դժբախտաբար, մարդիկ կան, որ լեզվական ասանկ լուրջ անջրպետ մը կդնեն... Ես անոնցմե եմ, որ կհավատամ՝ մեկ ազգ ու մեկ լեզու ենք եւ ամեն ջանք կթափենք, որ հայոց լեզուն որեւէ ձեւով տարածվի: Եվ այս արեւելահայերենով գիրքը այնչափ լավ պատրաստված էր, որ մեկ տարվա մեջ չսպասված վաճառք ունեցավ եւ Փարիզի սալոնին մեջ ամենեն շատ վաճառված գիրքերեն մեկը եղավ», եւ ավելացրեց, որ բառարաններ տարածող մի կազմակերպության հետ կնքված համաձայնագրով այն կտարածվի նաեւ ֆրանսախոս այլ երկրներում: Նույնպես հաջողություն է ունեցել «Արեգի» «Հայաստանի հրաշալիքներ» պատկերազարդ հանրագիտարանը՝ ֆրանսերենով, Փարիզում տպագրված:**

## Շնորհանդեսային ներկայացում

**«Արեգի» գրքերը սովորաբար ներկայացվում են «Բուկինիստ» գրատանը կամ «Արտբրիջ» գրախանութ-սրճարանում: Այս անգամ ընտրված էր վերջինս, որտեղ հիմնականում մտավորական միջավայր է լինում, հանդիսավորությունից զերծ, պարզ խոսքեր: «Արտբրիջը» արդեն մտերիմ մթնոլորտ ունի, եւ տնօրենը՝ Շաքե Հավան Կարապետյանը, բարեհամբույր ու ժպտադեմ է ողջունելիս: Այս անգամ էլ այդպես էր՝ շնորհավորանքներ ու հյուրասիրություն: Սամվել Գասպարյանը ասաց, որ սա իրենց հերթական աշխատանքն է եւ որ շուկան է թելադրում պահանջարկը եւ անգլերենին զուգահեռ այսօր հավասար վաճառվում են նաեւ հայերեն-ռուսերեն բառարաններ: Վերջին շրջանում նման երկու բառարանների գոյությամբ, դրանցից մեկը Պետրոս Բեդիրյանի, Ջ. Ղարիբյանի, Դ. Անմեղիկյանի հեղինակած, նորի նախաձեռնությունը համարձակ քայլ էր, որի իրագործումը շուրջ 2 տարվա ոչ միայն լեզվագիտական,**

**«Սիժեստի» հետ համատեղ երրորդ (նախորդը «Ֆրանսերեն-հայերեն զրուցարանն էր)՝ «Երեւանյան դիմանկարներ» ֆրանսերեն գրքույկը, որ ներկայացրեց Վարուժան Սիրապյանը, Երեւանի մասին ֆրանսիական հեռուստաընկերություններից մեկի աշխատակցի մտահղացումն է՝ Երեւանը ներկայացնել ոչ թե «կլասիկ կլիշեներով», այլ քաղաքում ապրող մարդկանց միջոցով: Շուտով լույս կտեսնի գրքույկի նաեւ հայերեն տարբերակը:**

**Հանրակրթական դպրոցների ոչ միայն աշակերտության, նաեւ ուսուցիչների համար օտար լեզուների ուսուցման, նաեւ հրատարակչությունների հետ համագործակցության անհրաժեշտության մասին էր Աշոտ Բլեյանի խոսքը:**

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Հայ ծանրորդներից կրկին մեդալների ակնկալիքներ կան

Ապրիլի 11-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում կսկսվի ծանրամարտի Եվրոպայի տղամարդկանց 90-րդ եւ կանանց 24-րդ առաջնությունների մեկնարկը: Այսօր Հայաստանի մարզական պատվիրակությունը ծանրամարտի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանի գլխավորությամբ կմեկնի Կազան: Մեր պատվիրակության կազմում են Հայաստանի տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ Պողոս Պողոսյանը, մարզիչներ Օգսեն Միրզոյանն ու Փաշիկ Ալավերդյանը, կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Արտաշես Ներսիսյանը եւ 10 ծանրորդներ:




Կազանում Հայաստանի մարզական պատիվը կպաշտպանեն Սմբատ Մարգարյանը (56 կգ), Վանիկ Ավետիսյանը (69 կգ), Սամվել Գրիգորյանը (69 կգ), Արայիկ Միրզոյանը (77 կգ), Աղասի Աղասյանը (77 կգ), Էդգար Գեւորգյանը (85 կգ), Գեւորգ Պողոսյանը (94 կգ), Արթուր Բաբայանը (105 կգ), Էլեն Գրիգորյանը (53 կգ) եւ Հռիփսիմե Խուրշուդյանը (+75 կգ):

Եվրոպայի առաջնությանն էր նախապատրաստվում նաեւ Մելինե Դալուզյանը, որը պետք է հանդես գար մինչեւ 69 կգ քաշայինների մրցավեճում: Սակայն վերջին պահին ստամոքսի հետ կապված խնդիրները կրկին անհանգստացրին Մելինեին, որի հետեւանքով նա զրկվեց Եվրոպայի առաջնությանը մասնակցելու հնարավորությունից: Նշենք, որ փետրվարին էլ նա վնասվածքի պատճառով չէր մասնակցել Հայաստանի առաջնությանը:

Եվրոպայի առաջնությունը բաց կթողնի նաեւ 2009-ի աշխարհի չեմպիոնուհի Նազիկ Ավդալյանը: Նա երկարատեւ ընդմիջումից հետո փետրվարին մասնակցեց Հայաստանի առաջնությանը: Ճիշտ է, նրա ցույց տված արդյունքը համեստ էր: Մարզիչները նպատակահարմար են գտել, որ Նազիկը շարունակի նախապատրաստությունն աշխարհի առաջնությանը, որտեղ խաղարկվելու են 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը:

Մեր առաջատար ծանրորդներից բացակայում են նաեւ աշխարհի չեմպիոն Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանը, Առաքել Միրզոյանը, ինչպես նաեւ վնասվածքներից դեռեւս լրիվ չապաքինված Արա Խաչատրյանը, Տիգրան Վարդանի Մարտիրոսյանն ու Գեւորգ Դավթյանը:

Ինչ խոսք, Եվրոպայի առաջնությունից էլ մարզասերների սպասելիքները մեծ են: Վերջին տարիներին հայ ծանրորդները մեդալների հարուստ ավարով են տուն վերադառնում աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններից, խոշորագույն այլ մրցաշարերից` ապացուցելով, որ այսօր առաջատար դիրքեր են գրավում համաշխարհային ծանրամարտում:

Օրինակ, անցյալ տարվա ապրիլին Մինսկում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում հայ ծանրորդներից երկուսը նվաճեցին չեմպիոնի տիտղոսը, չորսը դարձան Եվրոպայի փոխչեմպիոններ, մեկն արժանացավ բրոնզե մեդալի: Մինսկում Եվրոպայի չեմպիոններ հռչակվեցին Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանը (77 կգ) եւ Գեւորգ Պողոսյանը (85 կգ): Տիգրանը երկամարտում ցույց տվեց 360 կգ (165 + 195) արդյունք` 9 կգ-ով գերազանցելով 2-րդ տեղը զբաղեցրած լեհ ծանրորդ Կրժիժտոֆ Շրամիակին: Գեւորգը երկամարտի 369 կգ (165 + 204) արդյունքով ուժեղագույնը ճանաչվեց` ընդամենը 1 կգ-ով գերազանցելով Արա Խաչատրյանի ցուցանիշը, որը դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն: Ամեն ինչ որոշեց հրում վարժությունը, որտեղ Արան ընդամենը 1 կգ պակաս բարձրացրեց Գեւորգից:

Եվրոպայի փոխչեմպիոններ հռչակվեցին նաեւ Սմբատ Մարգարյանը (56 կգ)` 255 կգ (109 + 146), գերծանրքաշային Ռուբեն Ալեքսանյանը` 432 կգ (195 + 237) եւ Մելինե Դալուզյանը (69 կգ)` 260 կգ (115 + 145): Մինչեւ 75 կգ քաշային կարգում Հռիփսիմե Խուրշուդյանը երկամարտի 273 կգ (122 + 151) արդյունքով նվաճեց բրոնզե մեդալ:

Հուսանք, որ Կազանում էլ հայ ծանրորդները մարզասերներին կուրախացնեն բարձր արդյունքներով ու նվաճած մեդալների առատությամբ:

# Բռնցքամարտիկները կվիճարկեն Գագիկ Ծառուկյանի անվան մրցանակները

**Ապրիլի 12-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կմեկնարկի ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի անվան բռնցքամարտի միջազգային մրցաշարը: Քաշային 10 կարգերում մրցանակները կվիճարկեն 22 երկրների բռնցքամարտիկներ: Սպասվում է բավական համառ մրցակցություն, քանի որ Երեւան են ժամանելու մի շարք ուժեղ բռնցքամարտիկներ: Օրինակ հայտնի է, որ Հնդկաստանի, Ուզբեկստանի եւ Ղազախստանի հավաքականները մրցավայր են ժամանելու մարտական կազմով:**

**Այս մրցաշարը ուժերի լավ ստուգատես կլինի նաեւ Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամների ու թեկնածուների համար: Որպես մրցաշարի կազմակերպիչներ, մեր ներկայացուցիչների թիվը մրցաշարում բավական մեծ կլինի` մոտ 40 բռնցքամարտիկ: Նրանցից 26-ը մեր ազգային հավաքականի անդամներն ու թեկնածուներն են: Անվանի բռնցքամարտիկներից բացակայում են միայն աշխարհի գավաթակիր Անդրանիկ Հակոբյանը (75 կգ) եւ Եվրոպայի 2008-ի չեմպիոն Էդուարդ Համբարձումյանը (64 կգ): Ըստ որոշ տվյալների, վերջինս ավարտել է մարզական իր կարիերան:**

**Մրցաշարի բացման արարողությունը կսկսվի ապրիլի 12-ին, ժամը 16-ին, որին կհաջորդեն նախնական փուլի հանդիպումները: Մարզահամերգային համալիրի մուտքն ազատ կլինի մարզասերների համար: Հաղթողները հայտնի կդառնան ապրիլի 17-ին: Ուժեղագույնը ճանաչված բռնցքամարտիկները կպարգեւատրվեն 5000-ական դոլարով: 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրները կստանան համապատասխանաբար 3000 եւ 1000-ական դոլար:**

**Այս մրցաշարը մեր բռնցքամարտիկների համար կլինի ուժերի փորձարկման վերջին հնարավորությունը հունիսի 16-26-ը Անկարայում կայանալիք բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունից առաջ:**

# Սաբոնիսը կընդգրկվի Փառքի սրահում

**Սեուլի օլիմպիադայի չեմպիոն, լիտվացի հանրահայտ բասկետբոլիստ Արվիդաս Սաբոնիսը կընդգրկվի ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության Փառքի սրահում, որն այժմ կրում է մարզաձեւի հիմնադիր Ջեյմս Նեյսմիթի անունը: Փառքի սրահում ընդգրկելու պաշտոնական արարողությունը տեղի կունենա օգոստոսին Սպրինգֆիլդում: Այդ օրը, Սաբոնիսից բացի կմեծարվեն նաեւ նախկին բասկետբոլիստներ, «Չիկագոյի» եւ «Դետրոյթի» կազմում 5 անգամ չեմպիոն հռչակված Դենիս Ռոդմանը, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Կրիս Մալինը, Արտիս Գիլմորը, Թոմ Սանդերսն ու Ռիզ Գասումը:**



**Սաբոնիսը նախկին ԽՍՀՄ-ի 4-րդ ներկայացուցիչն է, որ արժանանում է նման պատվի: Նախկինում Փառքի սրահում ընդգրկվել էին Սերգեյ Բելովը (1992-ին), Ուլյանա Սեմյոնովան (1993-ին) եւ հանրահայտ մարզիչ Ալեքսանդր Գոմելսկին (1995-ին): Սաբոնիսը հանրահռչակ էր դարձել դեռեւս ԽՍՀՄ-ում հանդես գալիս: 1981-ին 16 տարեկանում նա նորամուտն է նշել Կաունասի «Ժալգիրիսում», իսկ հաջորդ տարի արդեն Ալեքսանդր Գոմելսկին նրան հրավիրել է ԽՍՀՄ հավաքական: 1985-ին եւ 1986-ին Սաբոնիսը «Ժալգիրիսի» կազմում արժանացել է երկրի չեմպիոնի տիտղոսին: Հաջորդ տարի նրա գլխավորությամբ թիմը 3-րդ անգամ դարձավ ուժեղագույնը: Այդ տարի Սաբոնիսը ոտքի վնասվածքով էր խաղում, որի պատճառով մեկ տարի չկարողացավ խաղահրապարակ դուրս գալ: Հիմնականում շնորհիվ ամերիկացի բժիշկների, Սաբոնիսը կրկին ոտքի կանգնեց ու Սեուլում օգնեց ԽՍՀՄ հավաքականին նվաճելու օլիմպիական խաղերի չեմպիոնի տիտղոսը: Նշենք, որ 1985-ին էլ նա խորհրդային հավաքականի կազմում արժանացել էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին:**

**1995-ին Արվիդաս Սաբոնիսը պայմանագիր կնքեց ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության առաջնության մասնակից «Պորտլենդի» հետ: 1997/98-ի մրցաշրջանում նա արդյունավետության անձնական ռեկորդ սահմանեց` վաստակելով 33 միավոր: Բասկետբոլի ազգային ընկերակցության առաջնությունում Սաբոնիսի համար լավագույնը 1998/99-ի մրցաշրջանն էր, երբ «Պորտլենդը» մտավ եզրափակիչ փուլ` 4 խաղերում զիջելով «Սան Անտոնիոյին»:**

**Լիտվայի հավաքականի կազմում Սաբոնիսը դարձել է 1995-ի Եվրոպայի փոխչեմպիոն, 1992-ին Բարսելոնի օլիմպիադայում նվաճել է արծաթե մեդալ, իսկ 4 տարի անց Ատլանտայում դարձել է բրոնզե մրցանակակիր: 2001-ին Սաբոնիսն արժանացել է ՄՕԿ-ի բարձրագույն պարգեւի` օլիմպիական շքանշանի:**

# Պորտուգալական ակումբների բենեֆիսը

**Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումներում իրենց գերազանց դրսեւորեցին պորտուգալական երեք ակումբները: «Պորտոն» սեփական հարկի տակ 5-1 հաշվով ջախջախեց Մոսկվայի «Սպարտակին»: Վերջինս միայն առաջին խաղակեսում կարողացավ լրջորեն դիմադրել տանտերերին, որոնց միայն մեկ անգամ Ֆալկաոյի հարվածից հետո հաջողվեց գրավել մրցակցի դարպասը: Իսկ ահա ընդմիջումից հետո պորտուգալացիները պարզապես ջախջախեցին սպարտակցիներին` գործնականում լուծելով կիսաեզրափակիչի ուղեգրի հարցը:**

**Խոշոր հաշվով հաղթեց նաեւ պորտուգալական մյուս ակումբը` Լիսաբոնի «Բենֆիկան»: Սեփական հարկի տակ դաշտի տերերը 4-1 հաշվով պարտության մատնեցին հոլանդական «Էյնդհովենին»: Կիեւի «Դինամոն», որ նախորդ փուլում պայքարից դուրս էր մղել անգլիական «Մանչեսթր Սիթիին», հարցականի տակ դրեց իր հետագա մասնակցությունը գլխավոր մրցանակի համար մղվող պայքարին: Սեփական հարկի տակ դինամոյականները ոչ-ոքի (1-1) ավարտեցին հանդիպումը պորտուգալական «Բրագայի» հետ: Խաղը շատ հաջող սկսվեց «Դինամոյի» համար, որն արդեն 6-րդ րոպեին Յարմոլենկոյի հարվածով բացեց հաշիվը: Սակայն 7 րոպե անց Գուսեւը գնդակն ուղարկեց սեփական դարպասը:**




**«Դինամոն» ծանր կացության մեջ հայտնվեց 61-րդ րոպեից, երբ 2 զգուշացումների համար դաշտից հեռացվեց Անդրեյ Շեւչենկոն, որը չի մասնակցի պատասխան հանդիպմանը:**

**Գործնականում մրցակցության ելքը վճռվեց նաեւ «Վիլյառեալի» եւ «Տվենտեի» մրցավեճում: Իսպանացիները սեփական հարկի տակ 5-1 հաշվով ջախջախեցին Հոլանդիայի չեմպիոնին:**

# Կլիչկոները կողմնորոշվեցին մրցակիցների հարցում

Կլիչկո եղբայրների մենեջեր Բեռնդ Բենտեն տեղեկացրել է, որ գերծանրքաշային կարգում աշխարհի չեմպիոնների առաջիկա մրցակիցներն արդեն հայտնի են: IBF-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն հունիսի 25-ին կամ հուլիսի 2-ին կմրցի WBA-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Դեւիդ Հեյի հետ, իսկ WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոն սեպտեմբերի 10-ին Լեհաստանում կմենամարտի Թոմաշ Ադամեկի հետ:

Բենտեն նաեւ նշել է, որ եղբայրներից մեկի վնասվածքի դեպքում մյուսը կփոխարինի նրան: Քանի որ դեռեւս 2009-ին Վլադիմիր Կլիչկոն ցանկանում էր հանդիպել Դեւիդ Հեյի հետ, ուստի հենց նա էլ կմենամարտի բրիտանացի բռնցքամարտիկի հետ: Առայժմ Դեւիդ Հեյի հետ մենամարտի անցկացման վայրը հայտնի չէ: Բացառված չէ, որ մենամարտը նույնիսկ Գերմանիայում չկայանա: Իսկ Ադամեկի հետ Վիտալի Կլիչկոյի մենամարտը կանցկացվի Վարշավայում կամ Վրոցլավում: Ամեն ինչ կվճռվի ապրիլի 9-ից հետո, երբ Ադամեկը կմենամարտի Քեւին Մակբրայթի հետ: Ընդ որում, եթե Ադամեկը պարտվի, ապա Կլիչկոյի հետ չի մենամարտի: Այդ դեպքում Վիտալին հնարավոր է հունիսի 4-ին Գերմանիայում մենամարտ անցկացնի:

Ըստ Բենտեի, Կլիչկո եղբայրների մենամարտերն ամենայն հավանականությամբ ցուցադրվեն ԱՄՆ-ում HBO հեռուստաալիքով:

# Իվանչուկն ու Լահնոն լավագույններն են Ուկրաինայում

**Գրոսմայստերներ Վասիլի Իվանչուկն ու Եկատերինա Լահնոն ճանաչվել են Ուկրաինայի 2010-ի լավագույն շախմատիստներ: Նրանց կհանձնվի «Շախովի Գեսման» մրցանակը, որը սահմանել է «Շախովա Ուկրաինա» կայքը: Դափնեկիրները որոշվել են քվեարկության արդյունքներով, որին մասնակցել են ուկրաինացի 48 գրոսմայստերներ: Նրանցից յուրաքանչյուրն անվանել էր լավագույն հնգյակի իր տարբերակը: Առաջին տեղի համար տրվում էր 10 միավոր, 2-րդ տեղի համար` 7, 3-րդին` 5, 4-րդին` 3, 5-րդին` 1 միավոր:**

**Լավագույն շախմատիստի կոչման մրցույթում անվանվել են 11 հոգի: Վասիլի Իվանչուկը վաստակել է 314 միավոր: Լավագույն հնգյակում տեղ են զբաղեցրել նաեւ Պավել Էլյանովը` 183 միավոր, Ռուսլան Պոնոմարյովը` 181, Զախար Եֆիմենկոն` 165 եւ Անտոն Կորոբովը` 35:**

**Լավագույն շախմատիստուհու համար պայքարում նշվել են 14 հոգի: Եկատերինա Լահնոն վաստակել է 284 միավոր: Լավագույն հնգյակում տեղ են զբաղեցրել նաեւ Մարիա Մուզիչուկը` 171 միավոր, Ինա Գապոնենկոն` 157, Նատալյա Ժուկովան` 102 եւ Տատյանա Վասիլեւիչը` 65:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով




**ԻՐՈՆԻԱՆԵՐ**

## Երդվո՞ւմ եմ, երդվո՞ւմ ենք...

### *Ժամանակը իրենն է պահանջո՞ւմ*

Հիշում եմ, երբ երեխա էինք, հաճախ էինք երդվում, որ դիմացինը հավատա մեր խոսքին, որ սուտ չենք խոսում...Երդումներ կային. ազնիվ խոսք, ազնիվ կոմերիտական, իմ արեւ, պապայիս արեւ...Ամենաթանկ երդումը «մամայիս արեւն էր», որը հազվագյուտ էինք օգտագործում... Իսկ ավելի մեծերը ունեին այլ երդումներ՝ մեռնեմ՝ թե սուտ եմ ասում, գետինը մտնեմ՝ թե սուտ ասեմ, բալեքիս արեւ, բալեքիս թաղեմ՝ թե սուտ եմ ասում...

Այն ժամանակ սոցիալիստական սիստեմ էր... իսկ հիմա ի՞նչ սիստեմ է...

Հիմա արդեն երդվում են զինվորները, բժիշկները, ուսուցիչները... երկրի նախագահը... Առա՞ջ ենք գնում...

Ինչո՞ւ միայն նրանք երդվեն... Ինչո՞ւ չերդվեն ապագա ծնողները, որ գող, ավազակ, մաֆիոզ, կաշառք տվող ու վերցնող, խաղաքը մաքուր չպահող, օրենքին չծառայող սերնդով չապահովեն երկիրը, կունենան 10 երեխաներ, որոնք կապահովեն երկրի արտագաղթի կայուն ընթացքը...

Ինչո՞ւ չլինի հարկային տեսչության աշխատողների երդում... Ինչո՞ւ չլինի գործազուրկների երդում, բոմժերի երդում... Ինչո՞ւ չերդվեն սերիալներ նկարահանողները, որ իմանան Ադրբեջանում ազերի չկա, որ հակառակորդի ջրաղացին անտեղի ջուր չլցնեն...Դե, եկեք երդվենք բոլորս... որ ամեն տարվա հեռուստամարաթոնին ամեն մեկս, անկախ նրանից՝ աշխատանք ունենք, թե չունենք, ապահովված ենք մինիմալ զամբյուղով, թե՝ ոչ, կտանք 10 դոլար... Իսկ եթե 100 դոլար տանք ամեն մեկս... Իսկ եթե օրական մեկ դոլար տանք... Ամբողջ աշխարհում կա 10.000.000 հայ... Եվ այսպես տարիներ... Պատկերացնո՞ւմ եք, կլինենք աշխարհի ամենահարուստ երկիրը... Առա՞ջ... Ինչո՞ւ սահմանադրությամբ էլ այն չամրագրվի... Ինչո՞ւ քչերը երդվեն միայն...

Ինչո՞ւ զինվորների երդման մեջ չավելացնել՝ երդվում եմ ինքնասպան չլինել հայրենիքիս խաղաղ ծառայելու ընթացքում...

Ինչո՞ւ չերդվեն սփյուռքահայերը եւս, որ հեռուստամարաթոնին կապահովեն մշտական գումարով ամեն տարի, ամեն մի սփյուռքահայ ընտանիք կլինի Հայաստանի մեկ ընտանիքի հովանավորը ...

Դե, եկե՛ք երդվենք ամեն մեկս, բոլորս... Երդվո՞ւմ եմ, երդվո՞ւմ ենք, երդվո՞ւմ են...

Այ, դրանից հետո արդեն ի հայս կգան նոր՝ ապագայի երդումները՝ բոնուսիս արեւ, ընտանեկան լոտոյիս արեւ, կռունկիս արեւ, միտինգիս արեւ, թափանցիկությանս արեւ, բժշկիս արեւ, ոստիկանիս արեւ, հովանավորիս արեւ, կուսակցությանս արեւ, հարկային տեսչության պետիս արեւ, պատգամավորիս արեւ, թաղապետիս արեւ, քաղաքապետիս արեւ, նախարարիս արեւ, վարչապետիս արեւ, նախագահիս արեւ..., ինչպես նաեւ, օրինակ՝ թաղապետիս թաղեմ, թե սուտ եմ ասում եւ այլ ձեւերը...

**ԿԱՐՈ ՍՏԱՆՈՍ**

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք վարչական տարածքում գտնվող «Կոշաբուլախ-1, 2» կոչվող ջրաղբյուրներից խմելու-կենցաղային նպատակով 2,3 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 14-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

**ՀՀ բնապահպանության նախարարություն**

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում**

www. azg.am

## ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

ՀՀ Տավուշի մարզպետարանի «Իջեւանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ-ն գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Իջեւանի տարածքային բաժնում 31.01.1996թ. գրանցման համարը՝ 67.140.00120, վկայականի համարը՝ 01Ա022111

Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն: Հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 4: Հեռախոս 52-65-57

Աճուրդային եղանակով վաճառվում են հողակտորներ ՀՀ Տավուշի մարզի Կիրանց գյուղի 1-ին փողոցի 2/1 2/2 հասցեներում՝ 1-ին լոտ՝ 10000 մ2, ծածկագիր 11-039-0141-0004, 2-րդ լոտ՝ 7280 $մ^2$, ծածկագիր 11-039-0141-0003: Աճուրդի ներկայացված հողակտորների մեկ քառակուսի մետրի մեկնարկային գինը կազմում է 97 դրամ: Աճուրդը կկայանա 10.05.2011թ. ժամը 14:00-ին՝ Կիրանցի գյուղապետարանում: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 06.05.2011թ.: Տեղեկությունների համար դիմել Կիրանցի գյուղապետարան (հեռ. 094 009088):

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում եւ վերջինիս միջոցով իրականացնելու է «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք հրապարակային սակարկություններով՝

-Բնակարան, ընդ. մակերեսը՝ 170,6 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ծարավ Աղբյուրի փող., 129/4 շենք, բն. 1: Մեկն. գինը՝ 64100000 դրամ:

-Բնակարան, ընդ. մակերեսը՝ 86,8 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ծարավ Աղբյուրի փող., 119/3 շենք, բն. 2: Մեկն. գինը՝ 27500000 դրամ:

-Բնակարան, ընդ. մակերեսը՝ 71,5 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ծարավ Աղբյուրի փող., 119/3 շենք, բն. 1: Մեկն. գինը՝ 32100000 դրամ:

-Բնակարան, ընդ. մակերեսը՝ 96,4 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ծարավ Աղբյուրի փող., 117/2 շենք, բն. 2: Մեկն. գինը՝ 33700000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 10.05.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնման առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

**Հայաստանի Հանրապետություն**
**Գյուղատնտեսության նախարարություն**
**«Գյուղատնտեսական Բարեփոխումների Աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ**

## Մրցակցային դրամաշնորհների մրցույթ

Մեկնարկել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագիրը, որի բաղադրիչներից է մրցակցային դրամաշնորհների ծրագիրը: Բաղադրիչի իրականացումը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Ծրագրերի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով համաձայն գործող ընթացակարգի:

**Նպատակը.** Մրցակցային դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում աջակցել նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների, մեխանիզմների ստեղծմանը եւ տարածմանը:

**Ընդունելի տեխնոլոգիաներ.** Ներկայացվող ծրագրային առաջարկները պետք է համապատասխանեն հետեւյալ չափորոշիչներին՝

- Գյուղատնտեսական ոլորտում արտադրվող արտադրանքի (գյուղմթերքի) որակի եւ որակական հատկությունների բարձրացում:
- Գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործում՝ ներառյալ գյուղատնտեսական ապրանքների (մթերքների) արտադրության, վերամշակման, պահեստավորման նոր տեխնոլոգիաների ներդրում:
- Գյուղական բիզնեսի կառավարման բարելավում, կատարելագործում եւ բիզնեսի լավագույն փորձի զարգացում եւ տարածում:
- Գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացում, շուկայական կապերի ընդլայնում եւ ամրապնդում, ինչպես նաեւ գյուղ. մթերքների իրացման խնդիրների լուծում:
- ՀՀ տարածաշրջաններում կամ մարզերում գյուղատնտեսական արտադրանքի (մթերքի) նոր տեսակների եւ նոր տեխնոլոգիաների ներդրում, տարածում եւ զարգացում:

**Իրավասու հավակնորդներ.** Մրցակցային դրամաշնորհային ծրագրի մրցույթին կարող են մասնակցել՝

- Գյուղական ոլորտում գործող անհատ ձեռներեցներ, կոոպերատիվներ, ձեռնարկություններ (ՍՊԸ եւ այլն), միավորումներ (ասոցիացիաներ),
- Համայնքներում հիմնված ֆերմերային ֆորմալ եւ ոչ ֆորմալ (չգրանցված) գյուղական բիզնեսի խմբեր:

Ֆերմերային խմբերը պետք է բաղկացած լինեն առնվազն 5 հոգուց եւ ունենան տարբեր սեփական հողակտորներ (այսինքն նրանք չպետք է լինեն միեւնույն ընտանիքից, բայց կարող են լինել բարեկամներ): Խմբի անդամները պետք է լինեն նույն մարզից:

**Համագործակցություն.** Դրամաշնորհ ստանալու համար դիմորդները պարտավոր են համագործակցել որակավորված ծառայություն մատուցողների հետ: Ծառայություն մատուցողներից պահանջվում է ապահովել տեխնիկական աջակցություն առաջարկի նախապատրաստման եւ իրականացման գործընթացին:

- Ծառայություն մատուցող կարող են լինել՝
- Մասնավոր խորհրդատվական համակարգի մասնագետներ
- Անկախ մասնագետներ եւ տեխնիկական փորձագետներ
- Հասարակական, հետազոտական եւ կրթական հաստատությունների մասնագետներ
- Հասարակական կազմակերպությունների, Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների, Գիտասփյուռի, Գյուղատնտեսական ակադեմիայի մասնագետներ եւ փորձագետներ
- Երկրում գործող միջազգային այլ ծրագրերի փորձագետներ եւ մասնագետներ:

**Մասնակցության պայմանները.** Հավակնորդը (դիմորդը) ծառայություն մատուցողի եւ այլ մասնակիցների հետ միասին պետք է ներդնեն ծրագրով պահանջվող դրամաշնորհի ընդհանուր արժեքի նվազագույնը 30 տոկոսը, կանխիկ գումարային տեսքով:

Որպես այլ մասնակցի պարտականություն, տարբեր գործընկերների մասնակցությունը եւ ներդրումը պետք է հաստատվի գրավոր համաձայնագրով, կնքված հիմնական հավակնորդի, ծառայություն մատուցողի եւ այլ մասնակցի միջեւ:

Բացի ֆինանսական ներդրումից հավակնորդները կարող են կատարել ներդրումներ նաեւ բնամթերային տեսքով (շենք, շինություն, հող, աշխատուժ, հումք, գյուղ. մեքենաներ, սարքավորումներ, անասուններ, ծառայություններ եւ այլն), որոնք ուղղակիորեն կապված են դրամաշնորհային ծրագրի հետ:

**Ներկայացվող պահանջները.** Հավակնորդի (դիմողի) կողմից ներկայացված հայտը պետք է բավարարի հետեւյալ պահանջներին՝

- Առաջարկվող ծրագրի տեւողությունը չպետք է գերազանցի 24 ամիսը,
- Ծրագրի համար պահանջվող դրամաշնորհի գումարը պետք է լինի նվազագույնը 8,000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը 20,000 ԱՄՆ դոլար,
- Հայտով պահանջվող դրամաշնորհը պետք է ուղեկցվի նշված դրամաշնորհի գումարի առնվազն 30%-ի չափով կանխիկ համաֆինանսավորմամբ,
- Ընդհանուր ծրագրի արժեքը չպետք է գերազանցի 60,000 ԱՄՆ դոլարը,
- Դրամաշնորհ չի հատկացվի այն հավակնորդներին, որոնք արդեն իսկ իրականացրել են ՄԴԾ դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող ծրագիր,
- Դիմորդը միաժամանակ չի կարող ստանալ մեկ անգամից ավել դրամաշնորհ,
- Դրամաշնորհ չի հատկացվի այն հավակնորդներին, որոնք անհաջողության են մատնել, կամ նախկինում ձախողել են որեւիցե դրամաշնորհային ծրագիր:

**Դիմումների ընդունումը եւ գնահատումը.** Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) հայտերը եւ նրանց կից պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն «Գյուղատնտեսական Բարեփոխումների Աջակցության Ծրագրի Իրականացման Գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային Դրամաշնորհային Ծրագրերի քարտուղարություն մինչեւ 2011 թ. մայիսի 6, ժամը 16:00-ն:

Վերջնաժամկետից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվի: Հայտերը պետք է ներկայացվեն փակ ծրարներով չորս օրինակից՝ մեկը բնագիր, երեքը կրկնօրինակներ:

**Ծանուցում՝** ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակը:

- Դրամաշնորհների հատկացման եւ հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթանալու նպատակով «Գյուղատնտեսական Բարեփոխումների Աջակցության Ծրագրի Իրականացման Գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային Դրամաշնորհային Ծրագրերի քարտուղարության աշխատակազմը գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների հետ համատեղ յուրաքանչյուր մարզում կկազմակերպեն հանդիպումներ հայտատուների (դիմորդների) հետ, ըստ ստորեւ բերված գրաֆիկի:
- **ՀՀ Շիրակի մարզում,** 2011 թ. ապրիլի 11-ին, ժամը 11:00-ն:
  ք. Ախուրյան, Ախուրյանի գյուղապետարանի շենք, Գյումրու խճուղի ՎՆ 42 շենք, 3-րդ հարկ
- **ՀՀ Լոռու մարզում,** 2011 թ. ապրիլի 11-ին, ժամը 15:00-ն:
  ք. Սպիտակ, Շահումյան փող. 105 շենք
- **ՀՀ Տավուշի մարզում,** 2011 թ. ապրիլի 12-ին, ժամը 11:30-ն:
  ք. Իջեւան, մարզպետարանի շենք, Սահմանադրության փող. 1 շենք
- **ՀՀ Գեղարքունիքի մարզում,** 2011 թ. ապրիլի 12-ին, ժամը 15:00-ն:
  ք. Գավառ, մարզպետարանի շենք, Գրիգոր Լուսավորիչի 36 շենք
- **ՀՀ Սյունիք մարզում,** 2011 թ. ապրիլի 13-ին, ժամը 13:00-ն:
  ք. Գորիս, ՀՀ Սյունիքի մարզպետարանի Գորիսի ներկայացուցչություն (նախկին գործկոմի), Մաշտոցի 3 շենք
- **ՀՀ Վայոց Ձորի մարզում,** 2011 թ. ապրիլի 13-ին, ժամը 16:30-ն:
  ք. Եղեգնաձոր, մարզպետարանի շենք, Շահումյան 5
- **ՀՀ Արարատի մարզում,** 2011 թ. ապրիլի 14-ին, ժամը 11:00-ն:
  ք. Արտաշատ, մարզպետարանի շենք, Օգոստոսի 23 փողոց, 60 շենք
- **ՀՀ Կոտայքի մարզում,** 2011 թ. ապրիլի 14-ին, ժամը 15:00-ն:
  ք. Աբովյան, քաղաքապետարանի շենք, Բարեկամության 1
- **ՀՀ Արագածոտնի մարզում,** 2011 թ. ապրիլի 15-ին, ժամը 11:00-ն:
  ք. Աշտարակ, մարզպետարանի շենք, Վարդգես Պետրոսյանի փողոց, 4 շենք
- **ՀՀ Արմավիրի մարզում,** 2011 թ. ապրիլի 15-ին, ժամը 14:00-ն:
  ք. Արմավիր, մարզպետարանի շենք, Աբովյան 71

**Փաստաթղթերի ներկայացնելու վերաբերյալ տեղեկություններ**

Հայտերի պաշտոնական ձեւակարգերը եւ հայտերի լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ

- Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոններից
- «ԳԲԱԾԻԳ» ՊՀ էլ. Փոստ arsp@arminco.com, հեռ. 29-73-01; 29-73-02; 29-73-03

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: